Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L-48

«Ստ. Լիսիցեան եւ Ընկ.» Ընկերութեան

Վ. ՎԵՐԵՍԱՆԻ

ՄԻ ԸՆՄԵՂ ՄԱՐԴՈՒ ՍՈՍԿԵԼԻ ՄԱՀԸ



891.71
Ա-49

«Ստ. Լիսիցեան և Ընկ.» հրատարակչական Ընկերութիւնը ընդունում է ինքնուրոյն, քաղուածական և թարգմանական գրուածքներ ժողովրդական ընթերցանութեան համար, թէ գեղարուեստական և թէ գիտական։ Գրուածքի ծաւալը չորս (128 երես) տպագրական թերթից աւելի չըպիտի լինի։ Վարձատրութիւն տրւում է 16 դ. մինչև 48 ռուբլի տպագրական թերթին, նայելով գրուածքի տեսակին և արժանաւորութեանը։ Անյարմար դատուած ձեռագիրները վերադարձւում են։

Հասցէ՝ Թիֆլիս, Бебутовская ул. д. 29 Т-во «Ст. Лисиціанъ и К°.»

891.71
Ա-49
19 NOV 2010

Վ. ՎԵՐԵՍԱԵՎ

ՄԻ ԱՆՄԵՂ ՄԱՐԴՈՒ
ՍՈՍԿԱԼԻ ՄԱՀԸ

Եղելութիւն

Թարգմանեց
ՊԵՐՃ ՊՈՍՕՇԵԱՆՑ

Հրատարակութիւն
«ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»
Ընկերութեան

Ցատուկ գուշարով ԴԱՒԻԹ ՇԱԼԱՄԵԱՆԻ
յիշատակին

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց 15.
1905 (73

Հայ. ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Գրքերի Հանրային Գրադարան
Գ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ անվան

09.08.2013

13725

Дозволено цензурою. Тифлисъ, 2 декабря 1904 г.

Գոս. Գրադարան
ՀԱՅԿ-ԱՄՍԻՆ
Գ. Ամ. Մաշտոցյան
Գրադարան

4(03-91

Սրանից աւելի մեծ սէր չը-
կայ, եթէ մարդ իր անձը դնի իր
բարեկամների վրա:
(Յօհ. Աւետ. ԺԵ. 13.)

ԲԺՇԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Պետերբուրգ. *1892* թի, յուլիսի *2*.

Լրագիրները հաղորդում են, թէ Վոլգայի ափերում խոլեր է լոյս ընկել և հազարներով զոհեր է տանում։ Օ՛հ, սարսափելի է այդ հիւանդութիւնը. բժշկելը դժուար է, իսկ վարակելը շատ հեշտ։ Եթէ մէկը խոլեր է ընկնում, նրանից վարակւում է նրա հագուստը, ընակարանը, վարակւում են նրան խնամող տանտէրերը։ Եթէ հիւանդի փոխնորդները լանում են գետումը, հիւանդութիւնը մտնում է գետի մէջ։ Եթէ մի առողջ մարդ այն գետիցը ջուր է խմում կամ խոլերով հիւանդի կացարանումն ապրում է, այնպիսին ինքն էլ խոլեր է ընկնում։ Ուղիղն ասած, բոլորովին դժուար բան չէ վարակելուց զգուշանալ. եռման ջրի մէջ ցաւի սերմերը ոչնչանում են։ Լացէք սուլեմայով (բլոբանդիկով), կարբոլեան թթուով կամ կրաջրով խոլերով պառկած հիւանդի սենեակը, այնուհետև աներկիւղ կարելի է այնտեղ ապրել։ Եռման ջրով, սուլեմայով կամ

կարբոլեան թթուով կարելի է միանգամայն անհետացնել վարակումը ամեն բանից, ինչի որ խոլերը դիպել է. միաժամանակ՝ եթէ շատ կանաչեղէն չուտել, շատ օղի չը խմել, էլ ոչինչ երկիւղ չի լինիլ։

Ցաւն այն է, որ մեր ռամիկ ժողովուրդը այդ մասին ոչինչ հասկացողութիւն չունի, իսկ երբ բժիշկները կամենում են նրանց հասկացնել վարակւելուց ազատւելու միջոցները, ամբոխը ծաղրում է նրանց և կարծում է, թէ բժիշկների ասածները դատարկ խօսքեր են։ Նրանք դարձեալ շարունակում են ըստ սովորականին հում ջուր խմել, տուզում են սեխ ու վարունգով, հարբեցողութիւնով են պարապում։ Եւ այս է պատճառը, որ հասարակ ժողովուրդը շատ է մեռնում։ Դեռ ոչինչ, եթէ նրանք միայն ծաղրում են բժիշկներին, էլ ի՞նչ տեսակ տեսակ մտացածին, չեղած չը լսուած լուրեր ասես որ չեն հնարում ու տարածում։ Ասում են, թէ բժիշկները թունաւորում են ջրհորները, որտեղից ժողովուրդը ջուր է խմում, կենդանի մարդկանց կրի մէջ թաղում են, և այլն և այլն. ո՞ր մի յիմարութիւնն ասես։ Տգէտ ռամիկը հաւատում է այդ սրտերին և վախում ու փախս է տալիս բժշկից։ Այն տեղն է հասել, որ մի քանի քաղաքներում ամբոխը գըրգռւել է, խռովութիւններ է հանել, քանդել հիւանդանոցները և սպանոտել է բժիշկներին։—Ինչի՞, յանցանքներն ի՞նչ էր։—Այն միայն, որ նրանք կամենում էին օգուտ բերել և օգնել ժողովրդին։

Յուլիսի 4. Պետերբուրգի կեանքիս կեանք չի հանիլ. չը գիտեմ սրանից լաւ էլ ինչ կուզեմ։ Ռոճիկս լաւ, ծառայութիւնս ծանր չէ։ Երկու տարի է՝ ամուսնացած եմ. կինս, Նատաշաս, ջահել է, բարի է, ընտրուշ ու քաղցր է, մի տարի առաջ մի լաւ տղայ պտրգեց ինձ—իմ Վալոդեային, մի առողջ, մի ուրախ, մի կարմրաթուշիկ երեխայ։ Տուն ու տեղս լի, ընակարանս արձակ ու յարմար։

Այսօր ճաշից յետոյ պառկել քնել էի. երեկոյեան ժամի 7-ին Նատաշաս ինձ զարթեցրեց թէյ խմելու։ Եկայ սեղանատուն, հեշտաեռը քլքլթում էր սեղանի վրա, սպիտակ սփռոցի վրա շարուած էին սեր, կիտրոն և քղպուճ հացեր։ Նատաշաս բազմել էր հեշտաեռի առաջին, Վալոդեան նստած էր նրա մօտ դայեակի գըրկին. վերջինս կերակրում էր փոքրիկիս կաթնապուռով. երեխան խլեց դայեակի ձեռքից գդալը, ծիծաղելով սկսեց թխկթխկացնել սեղանին և կանչել «տա՜-տա՜-տա»... Ես գիրկս առայ Վալոդեային և ցոյց տալով Նատաշին, հարցրի. «սա ո՞վ է»։ Երեխան պատասխանեց։—Մայրիկը։ Յետոյ ես մատնացոյց արի ինձ և հարցրի.—«Իսկ սա՞ ով է»։—Նանի, Նանի։—«Ի՞նչ ես ասում, ինչ Նանի, այ սա է Նանին, ցոյց տուի դայեակին. հապա ե՞ս ով եմ»։—Նանի, Նանի, կամակորւեց և գոչեց երեխան։ Որքան հարցրի, որքան պահանջեցի, Վալոդեան չը կամեցաւ ասել, թէ ես ո՞վ եմ։ Վերջն այն տեղը հասաւ, որ բռնեց, ձիգ տուեց մօրուքս և գոչեց—տա՜-տա՜-տա՜...

Ժամը 9-ին Նատաշան քուն գրեց Վալոդեային։ Երեխան անմիջապէս քնեց մօր գրկին։ Մայրը զգուշութիւնով պառկեցրեց նրան անկողնի մէջ։ Երկար ժամանակ երկուսս միասին կանգնել էինք երեխայիս փոքրիկ մահճակալի մօտ և հիացած նայում էինք Վալոդեային։ Նա փափուկ թաթերը դրել էր գլխատակը և մշմշալով քնում և հանգիստ ու խաղաղ շունչ քաշում։

—Ի՞նչ հիանալի երեխայ է մեր անուշիկը,—կամաց շշնջաց Նատաշան՝ գգւելով ինձ.—որքան երջան-

կութիւն է մեզ համար, հոգիս, այսպիսի կեանքը։

Ես ոչինչ չըպատասխանեցի, միայն պինդ համբուրեցի նրան. Լուսամտից ներս էր թափանցել երեկոյեան վերջալոյսը, երկինքը կաս-կարմիր ու պայծառ էր։

—Օ՜հ, հիմա դուրսն էլ շատ լաւ է,—ասաց Նատաշան.—արի գնանք զբօսնելու, կուզե՞ս։

Երկար ժամանակ մենք զբօսնում էինք փողոցներում։ Վերադարձին մտանք երկաթուղու կայարանը։ Քիչ ժամանակից պիտի ճանապարհ ընկնէր մարդատար գնացքը. պլատֆորմի վրա մեծ բազմութիւն կար հաւաքուած. ամենքն իրար խռնուած՝ շտապում էին իրանց համար յարմարաւոր տեղեր բռնել վագոններում։

Ուրիշների թւում այս գնացքով Պետերբուրգից հեռանում էր մի առողջապահիկ խումբ։ Նրանք գնում էին խօլերով բռնուած տեղերը։ Նրանց մէջ կային երեք բժիշկ, հինգ ուսանող և ութ գթութեան քոյրեր։ Նրանք գնում էին Սամարա, որտեղ խօլերը մեծ զոհեր է անում, իսկ բժիշկներ քիչ կան։

Մեզանից ոչ հեռու, երրորդ կարգի վագոնի առաջ, մի բարձրահասակ, գունատ և լրջադէմ աղջիկ կանգնած՝ մխիթարական խօսքերով սիրտ էր տալիս արտասուալից աչքերով մի պառաւ կնոջ։ Աղջիկը գընացող գթութեան քոյրերից մէկն էր, իսկ լացող պառաւը նրա մայրը։

—Մայրիկ, մի խնդրիլ որ մնամ,—ասում էր աղջիկը,—իմ սիրտս քեզ համար շատ ցաւում է, բայց ինչ արած, ես չեմ կարող մնամ։ Ի՞նչ գործ ունեմ Պետերբուրգումը. ամարանոցում հանգիստ կեանք եմ վարում անուակով զբօսնում և թատրոններ եմ յաճախում։ Իսկ

այնտեղ այդ ժամանակ մարդիկ մեռնում, կոտորուում են ու նրանց օգնութիւն հասնող չըկայ։ Ամօթ է, եթէ մարդս միայն իր համար է ապրում, երբ ուրիշները տանջւում են և կարօտ են մեր օգնութեանը։

Երրորդ զանգը տւին։ Գնացողներն շտապեցին մտնել վագոնները. գնացքը սուլեց ու կայարանից հեռացաւ։

Ես ու Նատաշան գնացինք դէպի տուն. ամբողջ ճանապարհին ոչ մի խօսք դուրս չեկաւ մեր բերաններից, մի տեսակ տխրութիւն ծանրացաւ սրտերիս վրա։ Լուռ ու անխօս նստեցինք ընթրիքի։

—Դիտես,—յանկարծ դարձաւ ինձ Նատաշան,—յիշո՞ւմ ես՝ ի՞նչ էր խօսում կայարանումն այն աղջիկը։ Նա ասում էր.—ամօթ է, եթէ մարդս միայն իր համար է ապրում, երբ ուրիշները տանջւում են և կարօտ են մեր օգնութեանը։ Իսկ հիմա ես և դու լաւ ապրում, ուրախ կեանք ենք վարում և ուրիշների մասին չենք էլ մտածում։ Այստեղ, Պետերբուրգումը, առանց քեզ՝ էլ բաւականին բժիշկներ կան, իսկ այնտեղ բժիշկների պակասութիւն է։

Ես լռել էի։

—Ինքս էլ, Նատաշա, նոյնը մտածեցի, երբ լսեցի այն աղջկայ խօսքերը,—ասացի ես,—բայց ես իսկոյն մտաբերեցի քեզ, յիշեցի այն րոպէն, երբ ես և դու կանգնել էինք Վալօդեայի մահճակալի գլխավերևը... Ի՞նչ կըլինի ձեր օրը, երբ ես այնտեղ մեռնեմ։

—Սիրելիս, ի՞նչի պիտի մտածենք մեռնելու վրա. բոլորն էլ հո չեն մեռնում։ Բայց եթէ պատահի, որ դու մեռնես, դու մեռած կըլինես բարի գործի համար. ի՞նչ դուրս կըգար, եթէ ամենքն էլ քեզպէս դատէին։ Այն աղջիկը չէր գնալ, որովհետև կը խղճար պառաւ մօրը

թողնելու, մի ուրիշը չէր գնալ, որովհետև ջահել կնոջ տէր է... դուրս կըգար այն, որ ամենքն էլ կընստէին իրանց տներում, իսկ այնտեղ ժողովուրդը կըմեռնէր, կը կոտորուէր առանց օգնութեան։

—Ուղիղ է ասածդ, Նատաշա,—պատասխանեցի,—շատ ճշմարիտ ես ասում, ես էլ պէտք է գնամ, այստեղ Պետերբուրգում առանց ինձ էլ բաւականին բժիշկներ կան։

Յուլիսի 5-ին. Լրագիրներում յայտարարուած էր, որ Սլեսարսկ քաղաքի վարչութիւնը որոնում է բժիշկ իրանց քաղաքի բանտարական թաղի համար։ Հեռագիր քաշեցի Սլեսարսկ և յայտնեցի իմ համաձայնութիւնը։

Յուլիսի 7-ին. Սլեսարսկից հեռագիր ստացայ. քաղաքային վարչութիւնը հաղորդում է, որ ես ընդունուած եմ և խնդրում է, որքան կարելի է, շտապեմ գընալու։

Յուլիսի 8-ին. Այսօր ինձ մօտ եկաւ իմ ծանօթ աքցիզի աստիճանաւոր Վիկտոր Սերգէիչ Գոստիևը, որ ծառայում է Սլեսարսկում և շատ ժամանակ չէ վերադարձել է Պետերբուրգ։ Շատ յարմար ժամանակին եկաւ. ինձ համար խիստ հետաքրքրական էր իմանալ, թէ ինչպիսի ժողովուրդ է ապրում այն թաղումը և ինչպէս են նայում բժիշկներին։

Հէնց որ Վիկտոր Սերգէիչը լսեց, որ ես գնում եմ Սլեսարսկ, ասաց.

—Է՛, բարեկամ, իսկոյն հեռագրեցէք, որ հրաժարւում էք այնտեղ ծառայելուց։

—Ինչու՞,—հարցրի նրան։

—Գիտէք՝ ինչպիսի ժողովուրդ է բնակւում Սլեսարսկի բանտարական թաղումը։ Երեք օրւայ մէջ նը-

րանք ձեզ կսպանեն և չեն թողնիլ, որ աչք բանաք։ Փառք Աստուծոյ, դեռ հօ այնտեղ խօլերը էլ չըկայ, բայց տեսէք, թէ ինչ լուրեր են տարածւել։ Ամբոխն իրար պատմում է, թէ հարբած մարդկանց քարշ են տալիս հիւանդանոց ու այնտեղ կրի մէջ թաղում են, թէ բըժիշկները թունաւորել են քաղաքի բոլոր ջրհորները և միայն մի հատ մաքուր ջրհոր են պահել, այն էլ իրանց համար, ասում են, իբր թէ շատերն իրանց աչքով տեսել են, որ առողջ մարդկանց, օր-ցերեկով, չանգալներով բռնոտում են ու քարշ տալիս հիւանդանոց։ Ոչ ոք չի թագցնում, ամենքը միաբերան այն են ասում, որ եթէ, բան է, այն տեղ խօլեր երևայ, իրանք բոլոր բժիշկներին կըկոտորեն։ Հանաք բան չէ, բարեկամս։ Քաղաքից դուրս խօլերով բռնուածների համար մի հիւանդանոց էին շինել. նոյն գիշերն և եթ կրակ տւին, մոխիր դարձրին։ Հիմա դարձեալ նորն են շինել։ Բաղարում առուտուր անող կանայքը ամեն տեղ խօսում են, թէ մեզ համար բժիշկներ են հրաւիրել, որ գան մեզ թունաւորեն։ Մի քանի օր առաջ՝ գալիս է մօտս իմ լաւացարարը, լալիս է ու մղկտում. իմ երեխաներս ցաւ են դառել գլխիս, պարոն, ասում է խեղճ կինը. անցեալ օրը նրանք գործարանից տուն եկան և պատմում էին, թէ բանտարները խօսք են կապել, որ եթէ քաղաքն իրանց թաղը բժիշկներ ուղարկէ, իրանք ամենքին ջարդ ու փշուր պիտի անեն։ Մենք էլ պիտի միանանք բանտարներին, ասում էին որդիքս։ Որքան քարոզում, համոզում եմ, չեն լսում, պիտի գնան, իրանց գլուխը կրակի մէջ ձգեն... Ցեսնում էք՝ ինչ տեղն է հասել։ Հիմա, համեցէք, այդպիսի ժողովրդի համար չարչարւեցէք։ Եթէ այնքան յիմար են, որ իրանց օգուտը չեն հասկանում, թող հոգիները դուրս գայ։

—Հոգուդ մեղք էք անում այդպէս խօսելով, Վիկտոր Սերգէիչ,—ասացի ես.—չէ՞ որ նրանք իսկապէս հաւատացած են, թէ բժիշկները նրանց վնասն ու վատն են ցանկանում. չէ՞ որ խեղճերն անկեղծօրէն հաւատում են պառաւների ասածներին: Ինչէ՞ պիտի թշուառները շների պէս կոտորուեն ու սատկոտեն: Ա՛յ, կերթամ, աչքովը կըտեսնեն, որ իրանց վատը չեմ ցանկանում և կըհաւատան ինձ:

—Հրամեցիք, սպասեցէք,—ծիծաղեց Վիկտոր Սերգէիչը:—Դոնէ դուք, Նատալիա Սերգէէնա, համոզեցէք սրան որ չը գնայ, դարձաւ նա կնոջս. սա զուր տեղն, առանց մի օգուտ բերելու կը կորչի, կըփչանայ այնտեղ: Այս էլ մի մոռանաք՝ որ կուրծքը տկար է, իրան չը պիտի նեղութիւն տայ, չը պիտի գրգռի: Դուք հէնց կարծում էք, սա այնտեղ հանգստութիւն ունենալու է:

Նատաշան ժպտալով երեսիս նայեց. ոչ, Նատաշան այն կինը չէ, որ միտքս փոխել տայ:

Յուլիսի 13-ին. Երեք օր է արդէն՝ Սլեսարեկումն եմ. այս էլ քեզ այն սարսափելի բանաւորական թաղը, ահա աչքիս առաջին է: Ինձ համար ընակարան եմ վարձել թաղի էն ծայրումը, մի այգեստէր քաղաքացու տանը:

Ամբողջ տունը երեք սենեակից է, երեքն էլ իմ ձեռքին է:

Հիւանդանոցը շինուած է քաղաքից դուրս նախկին հրդեհուած հիւանդանոցի աւերակի դիմաց: Շատ յարմարաւոր և սրտաբաց շինութիւն է. պատերի երկայնութեամբ դրած են մահճակալներ՝ մաքուր բարձերը վրանները շարուած և մոխրագոյն վերմակները փռուած, արևը շարունակ մէջը խաղում է: Այնտեղ կայ

մի ֆելդշեր—Խառլամպիյ Ալեքսէիչ Պրիշչեպենկո. նա խօսում է ծանր և յարգանքով, խօսելուս յօնքերը վեր է քաշում և խօսքի վերջին աւելացնում է՝ «հա»:

Ամեն բան լաւ կըլինէր հիւանդանոցում, եթէ այս ծառաները չըլինէին: Մարդ մոլորւում է՝ ո՞րտեղից են հաւաքել այսպիսիներին: Նրանցից մէկը Պաւլն է, ինքը մի փոքրիկ մարդ է, պղտոր ու վաւաշոտ աչքերով, երբէք մարդի աչքերին չի նայել. նա հագնում է բաճկոն և տոտերը ցած թողած շալվար. ամեն բանից երևում է, որ մենակ ոռճկի եռևից ընկած սրիկայի մէկն է: Երկրորդ ծառան է Ֆեօդորը, մի անտաշ գիւղացի տղայ, քնատաք ու յիմար աչքերով: Ահա սրանք են օգնականներս:

Յուլիսի 17-ին. Մի քանի օր սրանից առաջ զրուցիս մի յայտարարութիւն կախեցի, թէ ձրիաբար հիւանդներ եմ ընդունում, բայց մինչև օրս մի ծերունի է եկել միայն և երկու կինարժատ բերել են մօտս իրանց՝ փորահարինքով հիւանդ ծծկեր երեխաներին, բայց մեր թաղումն ամենքն արդէն ինձ ճանաչում են և գիտեն, որ բժիշկ եմ: Փողոցովն անցնելիս՝ բոլոր մեր թաղեցիք խէթ աչքով ու խոժոռ դէմքով են նայում ինձ: Մի ծանր զգացմունք է տիրում ինձ ամեն անգամ, երբ պիտի տանից դուրս գամ, և մեծ դժուարութեամբ եմ յաղթում այդ զգացմունքին. նրանց հայեացքներից ճնշուած, անցնում եմ աչքերը գետինը ձգած, կարծես ինձ զինուորաշարքի առջևից անցկացնելիս լինեն:

Յուլիսի 18-ին. Կարծես շուրջդ ամեն ինչ խաղաղ է, բայց օդի մէջ մի ինչ-որ չարագուշակ բան է պտտւում, ջղերս սաստիկ լարուած են: Ֆելդշերիս բերանով, խոհարարուհուս բերանով ամեն կողմից տա-

բոբինակ լուրեր են հասնում ականջիս, իբր է թէ ինձ տեսել են գիշերը Ջրհորի մօտ, իբր թէ ինչ որ փոշի էի ածում Ջրհորի մէջ, իբր թէ դարբնի աշակերտներն հետևից ընկել են ու ես թռել եմ ցանկապատի վրայով և ինձ ձգել պարտէզն ու թաքնուել։ Ուրիշները, իբր թէ տեսել են, որ գիշերը հիւանդանոց են բերել մի սայլաբեռը դագաղ և չանգալներ. Այս բոլորն, ի հարկէ, աւելորդ շաղակրատանքներ են, բայց ինչ անեմ, ամենքը հաւատում են։ Ասում են, որպէս թէ պատրաստուում են երկրորդ անգամ այրել հիւանդանոցը Ջարդել ոստիկաններին և բժիշկներին։ Ես աշխատում եմ ինքս ինձ հաւատացնել, թէ չեմ վախենում, բայց փողոցից լսած ամեն մի հարբածի երգ, ամեն մի թիկոց սիրտս անախորժ կերպով դողացնում, թնդացնում է։

Յուլիսի 19-ին կիւրակի։ Այս երեկոյեան ես մըթնով վերադարձայ տուն, ժառանգուղը պատել էր ամբողջ քաղաքը, անձրևը շաղում էր։ Մէկ էլ՝ գինետան դուռը բացուեց և աղօտ լոյս տարածուեց փողոցի երկայնութեամբ և փայլեցրեց անձրևաջրերը. ինչ-որ երկու ստուեր կամացուկ անց կացան փողոցը և թաքնուեցին այն աւերակի ետևը, որի կողքով պիտի անցնէի։ Ոտքերը բոբիկ, ցնցոտիները հագին մի տղամարդ թաքնուել էր դռնակի խորքում և լուռ ու մունջ, ուշ ուշով դիտում էր իմ հետքերս։ Ակամայից ամբողջ մարմնովս ձգուեցի, պինդ սեղմելով ձեռքիս մէջ գաւազանս։ Բաժակի կողմից դարձեալ երևացին երկու ստուեր։ Ականջիս հասաւ մի ձայն. «բժիշկն է»։ Ստուերներն սկսեցին փողոցի միւս կողմի պատի տակերով հետևել ինձ։ Վերադարձայ տուն։ Խոհարարուհիս սարսափը բռնած՝ հաղորդեց ինձ, թէ հէնց հիմի մի խումբ

հարբած բանուոր եկել էին, ինձ էին ուզում։ Որքան էլ խոհարարուհին հաւատացրել էր նրանց, թէ ես տանը չեմ, նրանք չէին լսել և սկսել էին դուռը կոտրել։ Մի ինչ-որ անցորդ ասել էր նրանց, թէ մի քանի րոպէ առաջ ինքն ինձ տեսել է եկեղեցու մօտ։ Հարբածները քշել էին այն կողմը։

«Վաւ կըլինէր, պարոն, եթէ այս գիշեր քաղաք գնայիք», խորհուրդ տուեց ինձ խոհարարուհիս... «Աստած հեռու տանի, հարբած ամբոխ է, ով գիտէ՝ ինչ բան է մտել գլուխները»։

—Է՛հ, այնքան էլ երկիւղ չըկայ,—ծիծաղեցի ես, թոթուելով խոհարարուհուս ուսին.—Ինչ պիտի անեն նրանք ինձ։ Վնաս չունի, այստեղ էլ կարող եմ քնել։

Գնամ քաղաք... Զը վերցնե՞մ արդեօք հետս ֆելդշերին և ծառաներին էլ, որ եթէ հիւանդացող պատահի, մեզանից ոչ մէկին տանը չը գտնեն։

Խոհարարուհիս գնաց քնելու։ Իմ քունը չի տանում... Նստած եմ գրասեղանիս առաջ... Ի՞նչ եմ ինքս ինձ խաբում. սիրտս ծանր է ու սարսափն ինձ բռնել է. սարսափում եմ այս թանձր մթութիւնից, սարսափում եմ, որ անկարող եմ պաշտպանուել։ Հէնց որ մտածում եմ, թէ էս-էս է ներս կը թափուեն, մի անմիտ սարսափ համակում է էութիւնս, և ես չեմ կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ մի՞թէ կարելի բան է այդ... ինչի՞ համար, ախար ինչի՞ համար։

Յուլիսի 21-ին. Երեկ պառկեցի քնելու գիշերուայ ժամը 1-ին։ Նոր աչքս կպել էր, որ յանկարծ մի թիկոց լսեց։ Խոհարարուհիս գլուխը դռան արանքից դուրս հանեց և յայտնեց, որ ֆելդշերն է եկել։ Մի նախազգացում սիրտս դող հանեց։ Հրամայեցի ներս կանչել ֆելդշերին և ճրագը վառեցի։

Խառլամպիյ Ալէքսէիչը գունատ, աչքերը չոռ-
ոտքի ծայրերի վրա, ծանր ու լուռ ներս եկաւ։

—Դիմիտրի Վասիլիչ, մեր թաղը խոլեր է երևա-
ցել, —գերեզմանական ձայնով խօսեց ֆելդշերը։

—Մի՞թէ։

—Իսկական խոլեր, փսխոցով ու ջղաձգութիւնով...
Փականագործ Զերքասովն է։

—Ինքներդ ձեր աչքով տեսաք, եղե՞լ էք այնտեղ

—Եղել եմ։ Եռևիցս մարդ էին ուղարկել հիւան-
դանոց, պատուիրեցի ջուր եռացնել և ինքս եկայ ձեզ
մօտ։

Շտապով սկսեցի հագնուել. կրծքովս, թիկունքով
մի բարակ սրթսրթոց էր անցնում, բերանս սկսեց ցա-
մաքել։ Ջուր առայ բերանս։ Հագնուեցի ու անհանգս-
տութեամբ սկսեցի ժամացոյցիս շղթան անցկացնել։

Խառլամպիյ Ալէքսէիչը յօնքերը վեր էր քաշել
աչքերը մի կէտի վրայ տնկած՝ անշարժ կանգնել էր
Նայեցի նրա շփոթուած պատկերին և ծիծաղս բռնեց
իսկոյն ուշքս գլուխս ժողովեցի։

—Այս էլ մեզ համար պարապմունք,—ժպտալո-
ասացի ես։—Ամեն՞ բան վերցրե՞լ էք, ինչ որ պէտք է

—Ամեն բան կայ, Պաւլի ձեռքին է նա՝ դռան
կանգնած է։

Մենք դուրս եկանք փողոցը։ Շուրջը լուռ և խա
դաղ էր։ Հասանք մեր թաղի հեռաւոր անկիւնների
մէկը և մտանք մի աղքատիկ, կիսաթեք տնակ. սենեա-
կում վառուում էր աղօտ լամպ։ Մի գեղեցկադէմ դեռա-
հաս կին, սարսափն երեսին, երեխան գրկին, ման
տաշեղներ էր դնում կասկարանքի տակ. մի մեծ թէյա
ամանով ջուր փլթփլթում էր կրակի վրա։ Վառարան
ետևը փայտէ մահճակալի վրա պառկած էր մի ամբ-

կազմ տղամարդ՝ մօտ երեսուն տարեկան, դէմքը գու-
նատ, աչքերը կիսաբաց։ Երիտասարդը ձեռքերը դրել
էր գլխատակը և թոյլ կերպով տնքում։

—Բարի երեկոյ,—ասացի ես՝ վերարկուս վերցնե-
լով։

—Բարև՛ ձեզ,—պատասխանեց ջահել կինը՝ նայե-
լով ինձ և նորից անմիջապէս երեսը շրջելով վառարա-
նի կողմը։

Մօտեցայ հիւանդին։

—Ցաւը վաղուց է բռնել,—հարցրի կնոջը։

—Այսօր ճաշից յետոյ,—պատասխանեց կինը՝ չը
նայելով ինձ։—Եկաւ բանատեղից, ճաշ կերաւ և մի ժա-
մից ցաւը բռնեց։

Խօսում էր կինարմատը տհաճութեամբ. կարծես,
աշխատում էր փախս տալ իմ դատարկ-դատարկ հար-
ցերից. առհասարակ՝ նա վարուում էր հետս այնպէս,
կարծես փողոցից տուն ընկած պատահական մարդ լի-
նէի, որ եկել է նրան խանդարելու մի կարևոր գործի
մէջ։

—Չ՛ը, Զերքասով, ինչպես էք,—հարցրի հիւանդին։

—Նա դանդաղութեամբ աչքերը՛ բացեց և երեսիս նայեց։

—Ներսս այրուում է, պարոն բժիշկ, ոյժ չի մնա-
ցել վրաս, սիրտս խառնում է։

—Սառցաջուր կուզէ՞ք։

Ֆելդշերը ջրամանը մօտ տարաւ. հիւանդը վրա
պրծաւ և ագահաբար ծծեց։

—Ինչի՞ց պատահեց։ Դժուարամարս բան հօ չէ՞ք
կերել այսօր։

Զերքասովը նորից մէջքի վրա պառկեց։

—Կաթնից պատահեց, պարոն բժիշկ, յոգնած

տուն եկայ բանտեղից, շչին (սպաս) կերայ և վրան իսկոյն երկու բաժակ կաթը խմեցի։

Հիւանդը լռեց և աչքերը փակեց։ Ֆելդշերը սկսեց մանանեխի սպեղանիք պատրաստել (հախու), իսկ ես գրպանիցս հանեցի մի դեղափոշի։

—Ա՛ռ, Զերքասով, ընդունիր այս փոշին,—ասացինս։

Հիւանդի կինը շտապով առաջ եկաւ, կանգնեց և դիտում էր ամեն իմ շարժումս։

—Ո՛չ, պարոն, այդ թողէք, ես փոշին ընդունողը չեմ,—վճռաբար ասաց Զերքասովը։

—Կարծում էք, թէ ես ձեզ թունաւորե՞լ եմ ուզում, ասացի ժպիտս զսպելով։ Ահա երկու դեղափոշի, սրանցից որը կամենաք՝ ընտրեցէք, մէկը դուք ընդունեցէք, մէկը ես։

Զերքասովը թէև տատանւում էր, բայց վերցրեց դեղափոշին։ Միւսը ես ածեցի բերանս։ Հիւանդի կինը յօնքերը ժողոված, շարունակ դիտում էր իմ արարքները։

Յանկարծ Զերքասովը թափահարեց և վեր թռաւ, նստեց անկողնի մէջ։ Նրա սիրտը խառնեց և սաստիկ փսխեց ամբողջ հողէ յատակի վրա։ Ես հազիւ կարողացայ ետ քաշել։ Զերքասովը գլուխը յատակին կախած, փսխում ու տնքում էր։ Ես ջուր տուի նրան։ Խմեց ու պառկեց։

—Դէ՛հ, Զերքասով, ընդունեցէք դեղափոշին,—ասացի ես։

—Հապա դուք դեռ մեր ջրից խմեցէք,—խորթ-խորթ նայելով՝ ասաց ինձ կինը։

—Շատ մի յիմար-յիմար դուրս տալ, մէրս,—գոռաց նրա վրա Ֆելդշերը։—Ինչի՞ պիտի բժիշկը ձեր ջուրը խմի։

—Այդ ես գիտեմ, որ ջուրը մերն է, բայց չէ՞ որ սառուցը ձերն է։

—Դրան ի՞նչ կարող ես հասկացնել,—ժպտացի, նայելով Ֆելդշերին։—Տուէք ինձ ձեր ջուրը։—Ես մի ազօտ յոյս ունէի, թէ կինն ինձ մաքուր ամանով ջուր կըտայ։ Նա վերցրեց հիւանդի ժօտի ջրամանը և մեկնեց ինձ։ Սիրտս տեղահան եղաւ։

—Չէ որ հէնց հիմա այս ամանից հիւանդը խմեց,—մտածեցի ես սարսափելով և ջրամանը բերանիս ժօտեցնելով։ Ես շատ լաւ յիշում եմ այն երկաթէ ջրամանի ծուռած շուրթը և մետաղի թոյլ հոտը։

Մի քանի կում կուլ տուի և ջրամանը դրի սեղանի վրա։

Զերքասովը դեղափոշին ընդունեց։ Ֆելդշերը նրա բերանին մանանեխ դրեց։ Հիւանդը սկսեց հանգստանալ։ Նա երկար ու մէկ ձգուած՝ անշարժ պառկած էր։ Նաւթի ճրագն իր սև ծխով խաւար կերպով լուսաւորում էր սենեակը։ Զահէլ կինը օրօրում էր լացող երեխային։

—Երբ մանանեխն սկսի այրել, յայտնեցէք ինձ,—ասացի Զերքասովին։

—Ոչինչ, պարոն, այրում է, բայց դուր է գալիս,—կամաց պատասխանեց հիւանդը։

Ես նստել էի աթոռի վրա և գլուխս կախել։ Այս ոգէին էր՝ խմեցի հիւանդի խմած ջրամանից, իսկ ե՞ս վարակուած լինեմ... Փորս սկսեց ղրղռալ թոյլ երպով և կտրատել։

—Նորից ոտքերիս ոսկորները տնքում են,—շտապով խօսեց Զերքասովը և սկսեց անկողնի վրա կուչ ձիգ գալ ու տարուբերուել։

—Ա՛յ կնիկ, տրորիր, մերսիր, ի սէր Աստուծոյ, էտ տրա, մերսիր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅ-ԱՄ
Ա. Մ. Ա. Մեսրոպյան
4103-91

Ես վերմակի տակից շոշափեցի նրա ոտքերը՝ կը-
ռաջլերը ձգել, կուչ էին եկել և քարի նման ամուր
էին։

—Օ՛հ... օ՛հ,—հառաչում էր հիւանդը դողդողալով
և երկար ու ձիգ տարածելով։ Մենք սկսեցինք տաք
շշեր դնել կռաջլերին և քաֆուրիով (կոմֆորա) մերսել։
Կամաց կամաց ջղաձգութիւնը թուլացաւ, Զերքասովը
բռնել էր ձեռքերով գլուխը և կխարաց աչքերով պառ-
կել. մէկ-մէկ նա ծանր տնքում ու հառաչում էր։ Պաւ-
լը նրան ջուր էր տալիս, հիւանդն ամբողջ ջրամանն
ագահաբար ծծում էր մինչև տակը։

Ներս եկաւ մի միջահասակ հաստակազմ, կայտառ
դէմքով, թխայտն կին։

—Բարև՛ ձեզ, պարոն բժիշկ,—ասաց նա։—Հ՛ը, հա-
բեւան, ինչպէ՞ս է մարդդ։

—Ա՛յ, պառկած է էլի,—կարճ կտրեց հիւանդի
կինը։

—Հիմա եկէք և սրանց հետ խօսեցէք, պարոն
բժիշկ. ոչինչ բանով չէին կամենում ձեզ կանչել, ինքն
իրան կանցնի, ասում էին, իսկ ես տեսնում էի, որ
մարդը ոտ ու ձեռը հաւաքել է, հազիւ է շունչ քաշում։
Ի՞նչ ես խօսում, Աքսինեա՛, ասացի, դու այս մարդու
կինը չե՞ս միթէ, այս, բացի բժշկից, ոչ մէկի բանը
չէ, բժիշկը միայն կարող է հասկանալ։

—Որքան շուտով ուղարկէք իմ եռևից, այնքան
լաւ,—ասացի ես։—Այս այնպիսի հիւանդութիւն է, որ
եթէ սկզբից շուտով վրա հասնի, հեշտ ու թեթև
կանցնի ու կազատուի։ Իսկ ձեզանում ի՞նչպէս են ա-
նում.—«կանցկենայ, հա՛ կանցկենայ» և երբ բանը վա-
տանում է, նոր են ուղարկում բժշկի եռևից։ Ճաշի
յետոյ՝ ցաւը բռնել է, և եթէ՞ սկոյն ինձ կանչել տա-

լինէիք, վաղուց ոտքի վրա կըլինէր։ Հիմա էլ, Աստու-
ծով, կը լաւանայ։

—Ի հարկէ, սիրելիս, այդպէս է, ուրիշ տեսակ
ինչպէս կարող է լինել։ Բժիշկներն ուսում են առ-
նում, նրանք են հասկանում հիւանդութիւնը։ Բայց
հիմի տեսէք, թէ ի՞նչ յիմար-յիմար բաներ են դուրս
տալիս, ո՞ր մէկին ականջ դնես, ո՞ր մէկը լսես։

Հիւանդը շարժուեց տեղումը։

—Մանանեխը խիստ է այրում, պարոն բժիշկ,
հրամայեցէք վերցնեն,—ասաց նա։

Նորից սկսեց սիրտը խառնել։ Հիւանդը քանի գը-
նաց՝ թուլացաւ, աչքերը մթնեցին, ոտք ու ձեռքերն
սկսեցին աւելի ու աւելի ձգձգուել։ Մենք երեքով
մերսում էինք Զերքասովին։ Դրացուհին գնաց։ Հիւան-
դի կինը նստել էր անկիւնում ու խոժոռադէմ և պլշած
աչքերով նայում էր մեր վրա։

Լուսանում էր։ Ես ձեռքերս սուլեժայով լուացի և
գնացի դուրս ծխելու։ Փողոցը դատարկ էր, մարդ չէր
երևում. մերձակայ պարտիզի ծառերի ճղներին ծըլ-
վլում էին ճնճղուկները։ Հիւանդի կինը նոյնպէս
դուրս եկաւ։

—Գիտես ի՞նչ, սիրելիս,—ասացի նրան.—դուք այդ
բոլոր ամանները, ինչով որ հիւանդը ջուր է խմել, մի
կողմը դարսեցէք և ինքներդ նրանցով ջուր մի խմէք,
թէ չէ կը վարակուէք։ Հեռացրէք նոյնպէս վերմակը և
հիւանդի ծածկած շորերը։ Այդ բոլորը հարկաւոր է եփ
տալ եռման ջրի մէջ։

—Մե՞զ ինչ, տարէք, եփ տուէք։

Հիւանդի կինը լռեց։

Ես ետ եկայ սենեակը։ Հիւանդը հանգիստ, տաք
ջրով լիքը շիշը ձեռքին բռնած՝ աչքերը փակել էր. մէկ-

մէկ ոտքերն էին ցնցւում և դէմքն էր ծամածուում։

Առաւօտեան մթնաշաղ լոյսը պատուհանից ներս էր տարածւել, ֆելդշերը գլուխը կախ՝ աթոռի վրա նստած՝ ննջում էր. հիւանդը նմանապէս վերմակում փաթաթւած նիրհում էր։ Լռութիւն էր։ Լուսամուտը թէև բաց էր, բայց գածը ու նեղ սենեակի օդը շատ ծանր էր։ Ես ֆելդշերին ու Պաւլին տուն ուղարկեցի ու ինքս մնացի մենակ։ Զերքասովի կինը՝ անդուկի վրա կծկւած՝ նոյնպէս ննջում էր։ Մի ժամի չափ զարձեալ նստեցի ես լուսամտի առաջին և ծխելով զւարճանում էի, արևի ծագումը դիտելով։ Զերքասովը խոր քնած էր։ Վտանգն անցել էր։ Տան տանտէրը դեռ պէտք էր հրաձգել, մինչև հիւանդը քունը թափէր, քնից կշտանար։ Ես զարթեցրի Զերքասովի կնոջը և նորից կրկնեցի, որ տան ամանեղէնը, փոխնորդներն ու հագուստները թողնի առանց ձեռք տալու մինչև մեր գալը, ու ինքս գնացի տուն։

Ինը ժամին մենք եկանք հիւանդի տունն ախտահանելու։ Զերքասովը չթէ մաքուր շապիկը հագին, երեխան գրկին՝ դռան մօտ կանգնած էր։

—Օհ՛ օ, աչքներս լոյս,—նայելով հիւանդին՝ ուրախ ուրախ գոչեցի ես։—Այս դուռ էք, Զերքասով, կեցցէք, բարի լոյս ձեզ։

—Բարի լոյս, պարոն բժիշկ,—գլուխ տալով ասաց Զերքասովը քաղցրաժպիտ դէմքով։

—Այժմ ինչպէս էք։

—Բոլորովին առողջ, շնորհակալ եմ, որ փրկեցիք ինձ. երեկ ես մտածում էի, թէ արդէն մահս մօտեցել է։

—Հիմա լսեցէք, Զերքասով, դուք այժմ զգոյշ կացէք ուտելեղէնից, կանաչեղէն և ծանր բաներ չուտէք։ Ամենից լաւը՝ այսօր կերէք թերխաշ ձու և խմեցէք կոնեակով թէյ։ Կոնեակն ինքս ձեզ կուղարկեմ։

—Աչքիս վրա, պարոն բժիշկ, խնդրեմ ներս հանեցէք։—Ես մտայ սենեակ և ակամայ շւարւեցի, մնացի. ինչ եմ տեսնում. տան յատակը մաքուր ալած, բոլոր ամանեղէնը լւացւած, դարակի վրա շարուած, իսկ Զերքասովի կինը կոնները քշտած խմոր է հունցում հիշտ այն նստարանի վրա, որ երեկ դրած էր հիւանդի գլխատակը։ Կոնեքս թուլացան։

—Ի սէր Աստուծոյ, այս ինչ էք արել,—հարցրի կնոջը՝ հազիւ զսպելով ինձ։

—Ի՞նչ կայ, որ ինչ եմ արել։

—Չէ՞ որ առաւօտը ես մի քանի անգամ ձեզ ասացի, թէ յատակը մի ալէք, ամանեղէնը մի կողմը հաւաքեցէք, թողէք...

—Կեխտոտ ինչի՞ պիտի մնային։

—Հիմա ինչ անենք, որ ամբողջ տունը դուք վարակեցիք, հասկանում էք, թէ ոչ... էհ...։—Ես ձեռքս օդի մէջ թափ տւի և դարձայ Զերքասովին.

—Դիտէք ինչ, Զերքասով, յամենայն դէպս հարկաւոր է սենեակն ախտահանել. բոլոր բարձերը, ձեր ծածկած վերմակը, այդ բոլորը տւէք մեզ. մենք վաղը կը վերադարձնենք ձեզ։ Սենեակը նմանապէս հարկաւոր է լաւ ցնցղկել ու ջրջրհանել։

Ֆելդշերը սուլիմայի շիշը ձեռքն առաւ։

—Չէ, պարոն բժիշկ, հրամայեցէք, թող այդ բանը չանի,—անմիջապէս խօսեց Զերքասովը, կոպտաբար ու խորթ խորթ մեզ նայելով։

—Ա՛յ քեզ բան, դուք հասկանում էք, Զերքասով, թէ ինչ էր ձեր հիւանդութիւնը. խօլեր էր, վարակիչ փոփոխական հիւանդութիւն։ Եթէ մենք չախտահանենք,

ձեր սենեակը, ձեր ողջ տունը կը վարակուի, ձեզանից կանցնի ամբողջ թաղը։

—Ուղիղն ասած՝ իմ հիւանդութիւնս դատարկ բան էր. շէի ու կաթը կերայ՝ ֆասեց, ուրիշ ոչինչ, որ տեղի խօլերն էր։

—Խնդրեմ ասէք, Զերքասով, դուք երբ ևիցէ խօլեր տեսած կա՞ք։

—Ը՛ը... ո՛չ, չեմ տեսել։

—Իսկ ես տեսել եմ և ասում եմ, որ ձեր հիւանդութիւնը խօլեր էր։ Ախար հօ չի կարելի, որ մարդ միայն իր գլխի վրա մտածի. եթէ այդ փոփոխական ցաւի առաջը չառնուի, կը տարածուի և դուք կը վարակէք բոլոր հարևաններին և ձեր կնոջը։ Մի՞թէ այդպէս կարելի է։

—Երբէք չեմ թոյլ տալ իմ տանս դեղ շաղ տաք,—ասաց Զերքասովի կինը.—կառնէք կարբոլի թթուն, շաղ կը տաք, տունս կը հոտացնէք։

—Ի՞նչ կարբոլի թթու. այս սուլեմա է և ոչ կարբոլի թթու. հոտ քաշիր, տես, հոտ կա՞յ։

Ես մօտ տարայ շիշը քթին։ Կինը հոտ քաշեց։

—Իհարկէ կայ։

—Լաւ հոտ քաշեցէք, ոչինչ հոտ չը կայ, ջուր է բոլորովին, սրանով էր, որ այս գիշեր ձեր սենեակը ցնցղկեցինք։

—Դրա համար էլ երեխայքս հազիւ են շունչ քաշում. կարբոլի թթուն շաղ կը տաք, բոլորը կը կոտորուին,—ասաց Զերքասովը։

—Ձեզ եմ ասում, Զերքասով, լաւ մտածեցէք, հա դուք յիմար մարդ չէք։ Ողջ գիշերը ես նստած, ձեզ խնամք էի տանում, մի՞թէ ես ձեր վատն եմ ցանկանում, մի՞թէ ես կուզեմ ձեր երեխանցը կոտորել։ Ա՛յ, ահա ինքներդ հոտ քաշեցէք, ոչինչ հոտ չը կայ։ Իսկ այս ցաւը պիտի արժատից կտրել, ոչնչացնել։ Չէ՞ որ ձեր հիւանդութիւնը վարակիչ էր։ Թողնենք հարևաններին, ձեր կինն ու երեխայքը կարող են վարակուել։ Այն ժամանակը ինքներդ ձեր ոտքով կը վազէք մօտս։

—Ի՞նչ ես ցցուել, մնացել, Իվան, երեխա՞յ ես, ոչինչ չե՞ս հասկանում,—խօսեց ֆելդշերը։

Իվանը շիշը վերցրեց ու սկսեց յատակը ցնցղկել։

—Ձեմ թողնիլ ցնցղկես,—գոչեց Զերքասովի կինը, յարձակուելով Իվանի վրա։

Զերքասովը քթի ու մռութը ժողոված՝ կանգնել էր ու պռոշները կռծոտում։

—Դու այստեղ շատ էլ աղմուկ մի՛ բարձրացնիլ, մէ՛րս,—ասաց ֆելդշերը,—թէ չէ՝ հէնց հիմի ոստիկան կը կանչենք։

—Բանը ոստիկանութիւնը չէ,—ընդհատեցի ես ֆելդշերին խոժոռ երեսով,—ես ոստիկան կանչողը չեմ, բայց ասացէք, Զերքասով, բացատրեցէք ինձ, ինչո՞ւ էք թոյլ տալիս ցնցղկելու։

—Ա՛յնպէս, պարոն բժիշկ, չեմ կամենում։

—Ախար ինչո՞ւ։

—Կտրականն ասեմ՝ պէտք չէ, Աստուծով այնպէս էլ կենդանի կը մնանք, չենք մեռնիլ։ Կարճ կտրենք, չեմ թողնիլ ցնցղկելու,—շեշտեց Զերքասովը ձեռքը թափ տալով։

—Ձեր կամքն է, ես ստիպողը չեմ, բայց միտքներդ պահեցէք, Զերքասով, եթէ ձեր հարևանութիւնից մէկն ու մէկը հիւանդանայ, մեղաւորը դուք կը լինէք, մնա՛ք բարին։

Ֆելդշերը շշկլած մնացել էր. նա աչքը ձգեց ե-

բեսիս ու հլու հնազանդութեամբ ետևից եկաւ։

Սիրաս նեղանում է, խիղճս տանջում է,—ախտահանելն անշուշտ հարկաւոր էր, բայց ի՞նչ կարող էի անել։ Մնում էր, որ ոստիկանութեանը դիմէինք։ Դիցուք, հիմա ախտահանեցինք. իսկ յետոյ, հետևանքը։—Հետևանքն այն կը լինէր, որ ամենայն հնարք գործ կը դնէին, խօլերով հիւանդներին կը թաղցնէին, իսկ վարակած իրեղէնները ծակուծուկերում պինդ կը պահէին ու հիւանդութիւնն աւելի ու աւելի կը տարածուէր ամեն կողմը։

Յուլիսի 25-ին. Ինչպէս երևում է, խօլերը բուն է դրել մեր թաղումը. արդէն երեք դէպք է պատահել, բայց դանդաղ կերպով է առաջ գնում. երեք հիւանդն էլ առողջանում են։ Նրանցից մինը քաղաքային այգեպանն էր. նա ինքը խնդրեց, որ իրան հիւանդանոց տանենք։ Նա մի գիւղացի երիտասարդ է 25 տարեկան, Ստեփան Բօնդարև։ Ամբողջ գիշեր մենք նրան խնամք էինք տանում և թէպէտ դեռ շատ թոյլ է, բայց արդէն առողջանում է։ Ի՞նչ ասել կուզի, որ նրան այցելել ցանկացողներին բոլորին ազատ թոյլ էի տալիս հիւանդանոց գալու։ Այդ բանի շնորհիւ էր, որ մեր թաղեցիք տեսան, որ խօլերի հիւանդանոցը սովորական հիւանդանոցներից սարսափելի չէ։ Երբ հետևեալ օրը խօլերով բռնուեց երկաթագործ Անդրէասը, ինձ համար դժուար չէր նրան համոզելը, որ գայ հիւանդանոցում պառկի։ Անդրէասի սուր ցաւերն արդէն անցել են, իսկ լուծը շարունակւում է և ինքը շատ նիհարել է և հայեացքն էլ թմրած է։

Յուլիսի 27-ին. Երեկ ճաշից յետոյ հիւանդանոցը բերին մի նոր հիւանդ։ Ֆելդշերը Ֆեօդօրի հետ գնաց նրա բնակարանն ախտահանելու, իսկ ես մնացի հի-

անդի մօտ։ Մի բարձրահասակ, գէր ու հաստ ծերունի էր նա—պղնձագործ Իվան Ռիկովը։ Շարունակ սիրտը խառնում էր, փսխում էր և ոտքերի ջղերն անդադար ձգձգւում էին։ Նա տնքում, հառաչում էր և անկողնի մէջ տարուբերւում։ Ես Պաւլին ուղարկեցի վաննա (լողարան) պատրաստելու։

—Թողէք մի քիչ ման գամ,—թոյլ ձայնով ասաց հիւանդը,—ոտքերս կծկւում, կուչ են գալիս, այժ չըկայ վրաս։

Ես կամեցայ օգնել նրան և վերկացնել։ Ռիկովը իր ահագին մարմնով թինկնեց վրաս, բայց չը կարողացաւ կանգնել, նորից նստեց անկողնի վրա։

—Ոչ, պարոն բժիշկ, դուք ինձ չէք կարող միայնակ բռնել, բարձրացնել,—յոգւոց հանեց նա գլուխը շարժելով։

Ինքս էլ գիտէի, որ այդպէս էր... Դեռ հիմա, որ հիւանդները սակաւ են, մենք զգում ենք ծառայողների պակասութիւն, իսկ եթէ էլի երկու նոր հիւանդ միայն աւելանան, ձեռք ու ոտներս խպառ կը կապւեն։ Ես մտայ նոր առողջացածների բաժանմունքը և առաջարկեցի Ստեփան Բօնդարևին մեզ մօտ սպասաւոր վարձելու։ Նա բոլորովին առողջացել է և պատրաստւում է հիւանդանոցից դուրս գնալ։ Ստեփանը համաձայնուեց։

—Ձի՞ք վախենում վարակւելուց,—հարցրի նրան։

—Ինչի՞ պիտի վախենամ,—անտարբերութեամբ պատասխանեց նա և ետևիցս եկաւ։

Վաննան պատրաստ էր։ Ստեփանին հրամայեցի Ռիկովին մէջը նստեցնել։

Ջղաձգութիւնները դադարեցին, հիւանդը գլուխը կախեց և լռեց։

—Ջուրն աւելի տաքացրէք,—նորից հառաչեց Ռիկովը։

Հրամայեցի տաք ջուր աւելացնել։

—Լաւ է այդպէս։

—Ի սէր Աստուծոյ, տաքն էլի աւելացրէք,— անհամբերութեամբ գոչում էր Ռիկովը։ Սկզբումը նա գոռ էր մեզանից և հանդարտ էր. այժմ հեռզհետէ քմահաճութիւնն ու պահանջներն աւելացնում էր։

—Մի՞թէ չի կարելի մի աւելի երկար վաննա բերել,—փնթփնթում էր և ոտքերը կուչ ու ձիգ ածում նա։

Երեկոն մօտենում էր։ Ռիկովը քանի գնում, ծանրանում էր։ Եկաւ քահանան և հաղորդեց նրան։ Փըսխումն ու լուծը չէին դադարում, հիւանդը մեր աչքի առջև ուժահատւում և նիհարում էր։ Ստեփանը չէր հեռանում Ռիկովից։ Նա երբեմն-երբեմն կոպտաբար պատասխանում էր հիւանդին, բայց մի տեսակ եղբայրական քնքոյշ հոգատարութիւն նշմարւում էր նրա հատուկտոր նկատողութիւնների և վարուեցողութեանց մէջ։

Գիշերւայ ժամը 1-ին ինձ փոխարինեց՝ քունն արդէն թափած ֆելդշերը։ Կարգադրեցի ինչ որ պէտք էր, պատուիրեցի հիւանդին վաննա նստեցնել՝ որքան ինքը կը ցանկանայ, և գնացի տուն։

Առաւօտեան ժամը հինգն էր՝ զարթեցի. կարծես մէկն ինձ հրեց։ Բարակ անձրև էր շաղում. պատառոտուն ամպերի ճեղքերից հազիւ տարածւել էր առաւօտեան լոյսը։ Ես հագնուեցի ու գնացի հիւանդանոց։ Մթութիւն և լռութիւն էր այնտեղ։ Ռիկովը կորագլուխ ու անշարժ նստած էր վաննի մէջ։ Ստեփանը կիսաթեք բռնել էր նրա կոնատակերից։

—Ի՞նչպէս է հիւանդը,—հարցրի ես։

Ստեփանը գունահատ և յոգնած դէմքով նայեց ինձ, դանդաղօրէն ուղղուեց և ուսերը շարժեց։

—Ոչինչ,—խոնարհութեամբ պատասխանեց նա,—շարունակ ործկում է և աւելի տաք ջուր է պահանջում։

Մի քանի ժամ էր միայն, ինչ Ռիկովը հիւանդացել էր, և այժմ ճանաչել չէր լինում նրան, երեսը նիհարել և կապտել էր, աչքերը խորացել, փոսացել էին, աչքի խոռոչները մի տեսակ խաւար լուսով աննշմարելի փայլում էին։

—Հը, Իվան, ինչպէս էք,—հարցրի իրան։

Ռիկովը գլուխը հազիւ շարժեց, արտևանունքն անգամ չը բարձրացրեց։

—Բարձր խօսիր, չեմ լսում,—փնթփնթաց նա թոյլ, խռպոտ և անլսելի ձայնով։

—Ի՞նչպէս է առողջութիւնդ,—բարձրաձայն կանչեցի ես։

Հիւանդը լուռ էր։

—Ջուրն աւելի տաքացրէք,—մրմռաց նա և ծանր ծանր վաննի մէջ շրջուեց միւս կողքին։

—Ո՞ւր է ֆելդշերը,—հարցրի Ստեփանին։

Բանից դուրս եկաւ, որ նրան կանչել էին նոր հիւանդի մօտ։ Իսկ Պաւլը, ֆելդշերի գնալուց յետոյ, խկոյն քուն էր մտել և հիւանդի մօտ մնացել էր միայն Ստեփանն ինքը։ Խեղճ մարդը նոր էր ոտքի կանգնել, առողջացել և երեք ժամ է անա, որ շարունակ կռացած բռնել էր վաննի մէջ ուժասպառ Ռիկովին։

Ես զարթեցրի Պաւլին։ Նա վեր թռաւ տեղից և խկոյն վազեց հիւանդի մօտ։

Ռիկովն առաջւայ պէս նստած էր վաննի մէջ։ Ստեփանը հիւանդին յանձնեց Պաւլին և ինքը գնաց կաթսայի մէջ ջուր աւելացնելու։ Պաւլը մեղաւոր

մարդու ժպիտով, խոնարհութիւնով բանել էր սարի չափ Ռիկովի կոնատակերից և պահպանում էր վանքի մէջ։ Ժամերն անցնում էին։ Ռիկովը համարեա վանքից դուրս չէր գալիս։ 11 ժամին հիւանդը ցանկացաւ անկողին մտնել և քնեց։

Նա փրկւած էր։

Օգոստոսի 1-ին. Խոլերը սասականում է։ Բազմաթիւ հիւանդներ արդէն մեռնում են։ Երեկ ճաշից յետոյ ինձ կանչեցին փականագործ Ժիգալեովի մօտ։ Մեր հետ միասին հիւանդին սկսեց խնամել նրա քոյրը— սիրուն ու խաղաղ աչքերով մի դեռահաս աղջիկ։ Գիշերւայ դէմ հիւանդացաւ և աղջիկը. միւս առաւօտ երկուսն էլ դագաղի մէջ էին։ Աչքիս առջև կենդանի նըկարագրւած է այժմ նրանց զառամեալ մօր ցաւատանջ դէմքը։ Ես ասացի պառաւին, թէ հարկաւոր է սենեակն ախտահանել։

—Ինձ ի՞նչ։ Կրաջուրը դուք շաղ էք տալիս հա շաղ տալիս, իսկ մենք մեռնում ենք ու մեռնում...

Ճշմարիտ է. մենք կրաջուրը շաղ ենք տալիս հա շաղ տալիս, իսկ նրանք մեռնում են ու մեռնում, բայց ո՞վ է մեղաւորը։ Ցաւը միանգամից արմատախիլ անելու համար՝ հարկաւոր է վարակւած տներից ամենքին հեռացնել, ժողովել բոլոր իրեղէնները, հիմնաւորապէս ախտահանել արտաքնոցներն ու բոլոր բնակարանները. բայց ո՞ւր տանենք նրանց, ի՞նչ հագցնենք և, որ գլխաւորն է, ի՞նչպէս հասկացնենք և համոզենք տգէտ ժողովրդին, թէ այս ամենը մենք իրանց օգտի համար ենք անում։ Ցաւալին այն է, որ նրանք ինձ չեն հաւատում, չեն հասկանում, թէ ինչքան կարևոր է ախտահանութիւնը։ Ախար ախտահանութիւնն այն ժամանակ միայն օգուտ կը բերի, երբ ժողովուրդն ինքը կատարելապէս

հաւատ կընծայի այդ գործին, եթէ ժողովուրդը ամենայն սիրով պատրաստ լինի յանձնել մեզ վարակւած բոլոր իրեղէնները և ինքն անձամբ մեզ օգնի ամենայն բանում... Նրանք ընդհակառակն՝ բոլոր եղած-չեղածը թագցնում են հեռաւոր տեղերում և շատ անբաւական են լինում, եթէ դու կամենում ես գործել՝ ինչպէս հարկաւոր է։

Օգոստոսի 3-ին. Գոհ եմ. ուրախութիւն է այս կեանքը։ Գործից աչք չենք բացանում, բայց ամեն ինչ իր կարգին է ընթանում, ոչ մի խոչընդոտ։ Վերջապէս ինձ աջողւեց օգնականներ գտնել. մօտս եղած տասնաւոր կիսագրագէտ գեղջուկների և արհեստաւորների վրա միանգամայն վստահ եմ, ինչպէս իմ վրա. սրանցից լաւ օգնականներ դժւար թէ գտնւեն։ Գալով Բօնդարև Ստեփանին, ես միանգամայն զարմանում եմ, թէ մի վայրենի և ըստ երևութին՝ անտաշ գիւղացու մէջ ո՞րտեղից է այսքան կանացի քնքշութիւնն և հիւանդների վրա ունեցած հոգածութիւնը։ Ահա քեզ և մի ուրիշը, օրինակ՝ Վասիլ Գօրլովը, բաց կապոյտ, աւազակային աչքերով մի երիտասարդ. ասում են, որ սա իր մօրը ծեծում է և կնոջը դնքսելով գերեզման է իջեցրել։ Եւ այժմ այս միևնոյն Գօրլովը ինձ մօտ իրան պահում է, ինչպէս մի խոնարհ գառը, և աշխատում է եղան նման։ Եթէ տեսնէք, թէ ի՞նչ համեստութիւնով, ի՞նչ քնքշութիւնով մտնում է խոլերով հիւանդի բնակարանը, ի՞նչ բաղցր դէմքով է բացատրում հիւանդի ազգականներին վարակելու էութիւնը և ախտահանութեան օգուտները։ Եւ չը գիտեմ, ինչո՞ւ բոլորբեքեան սրան աւելի են հաւատում, քան թէ ինձ...

Կանանց բաժանմունքի համար երկու սպասաւորուհիք ունեմ մօտս, նրանցից մէկը Չերքասոմների

դրացուհին է, նա՝ որ այն գիշերն եկել էր հիւանդին այցելելու։

Բոլոր ծառայողների հետ ես խօսում եմ դուքով, և վարւում եմ հետներն, ինչպէս ինձ հաւասարների հետ։ Շատ յաճախ մենք նստում ենք միասին հիւանդանոցի շէմքի մօտ, ծխում ենք և ասուլիս անում։ Սենեակ մտնելիս՝ ես առաջինն եմ գլուխ տալիս։ Այս բանովը նրանք բնաւին իրանց չափը չեն կորցնում և իմ բոլոր կարգադրութիւններս մեծ բարեխղճութիւնով կատարում են։

—Աստուծով եմ երդում անում, Դիմիտր Վասիլիչ,— ուրախ տրամադրութեան ժամանակ խոստովանեց ինձ Վասիլ Գօրլովը,—ես ձեզ սաստիկ սիրեցի և սիրում եմ. ձեր համար ազնուական ու ռամիկ հաւասար են, ամենքին դուք մի տեսակ էք ընդունում, ձեզ հետ խօսելն երկիւղալի չէ, ուրիշները այնպիսի ծանր բնութիւնի տէրեր են... Ուսումով, ի հարկէ, դուք... ազնուականութիւնով էլ... բայց ես ձեզ մօտ գալիս եմ, ինչպէս իմ հարազատ եղբօր մօտ... Ունեցէք այս ի նկատի։

Զգում եմ, որ հետզհետէ սրանց աչքում բարձրանում եմ։ Աշխատեցնում եմ շատ ու շատ, պահանջներիս վերաբերութեամբ խիստ եմ և անխնայ, բայց և այնպէս, համոզւած եմ, որ նրանցից և ոչ մէկը այդ պատճառով իր ծառայութիւնից չի հրաժարւիլ, ինչպէս Պաւլը։ Ես պարծենում եմ մանաւանդ նրանով, որ գործը սրանց համար մի տեսակ նուիրական և ազնիւ բան է համարւում։

—Դիմիտր Վասիլիչ,—ասում է ինձ Գօրլովը,— թոյլատէք՝ որ հարցնեմ. չէ՞ որ իշխանութիւնը ձեզ վրա

հակողութիւն չունի, ուրեմն ինչի՞ էք ձեզ այդպէս տանջում։

—Սիրելիս, մի՞թէ մենք իշխանութեան համար ենք գործ կատարում։ Ինքներդ դատեցէք. գնում էք հիւանդի մօտ, ցնցղկում էք ամեն տեղ, ախտահանում էք, մաքրում էք, իսկ եթէ այդպէս չանէիք, կարելի է ուրիշներն էլ հիւանդանային, բայց հիմի, ձեր շնորհիւ մարդիկ կենդանի կըմնան։ Մի՞թէ այդ բանը ձեզ համար ուրախալի չէ՞։

Եւ Գօրլովին թւում է, որ իր արածն արդարև հաճելի գործ է։

Մեր թաղումը շատ սիրում են ինձ և շատ գոհ են։ Երբ յիշում եմ, թէ ինչ զգացմունքով էի գալիս Պետերբուրգից, այն զգացմունքը միանգամայն ծաղրալի է թւում ինձ։ Աւելի շուտ ես քսան անգամ կը մեռնեմ, քան թէ մեր թաղեցիներից մէկն ու մէկը գլխիս հատ մազին կը դիպչեն։

Այո, ուրախութիւն է այսպէս ապրելը, ուրախութիւն է տեսնելը, որ ոյժերը զուր չեն գործադրւում, ուրախութիւն է զգալը, թէ ինքդ աւելորդ էակ չես և գիտես գործել։

Օգոստոսի 4-ին. Այդ բոլորը ճշմարիտ է. մեր թաղումն ինձ շատ են սիրում, գոհ են ինձանից և լսում են ինձ... Բայց կարո՞ղ եմ արդեօք ասել, թէ և՛ հաւատ են ընծայում ինձ։ Տւած խորհուրդներս թէպէտ ընդունում են, բայց համոզւած են, որ բոլորն անօգուտ են։ Գիւղացին ինձ, իմ սեփական անձնաւորութիւնն է որ յարգում է և խորհուրդս կատարում, որովհետև «ես լաւ մարդ եմ», իսկ իմ խորհուրդներին և «մեծամեծներին վայել» ստացած գիտութեանս նա հատ կոպէկի արժէք չի տալիս։ Իմ ուժից վեր է խախտել մեր

թագեցիներին այն յաժառ և խորին անվստահութիւնը, որ ունեն նրանք դէպի մեզ։

Օգոստոսի 6-ին. Երեկ երեկոյ ես վերադարձայ տուն՝ շատ յոգնած և դադրած։ Նախընթաց գիշերը մինչև լոյս անընդհատ պարապած էի, ցերեկն էլ ժամանակ չունեցայ հանգստանալու։ Հիւանդների ընդունելութիւնից յետոյ՝ պէտք է մի քանիսին իրանց անեռու�ն այցելէի, յետոյ հիւանդանոց պիտի հանդիպէի, իսկ ճաշից յետոյ՝ կանչեցին ծննդկանի։ Ազատուել կարողացայ միայն երեկոյեան ինը ժամին։ Ընթրիք արի, թէյ խմեցի և ուրախ սրտով աչքս ձգեցի պարզած անկողնիս վրա ու սկսեցի հանուել, յանկարծ զանգակ։ Հիւանդանոց են բերած եղել մի խիստ ծանր հիւանդ։ Ի՞նչ արած՝ գնացի. ֆելդշերը սանիտարների (առողջապահիկների) հետ ոտք ու ձեռք էր ընկել մահճակալներից մէկի շուրջը, ուր պառկած էր մի հաստ ու տոուզ գիւղացի, մօտ 40 տարեկան, շէկ միրքով և մի տեսակ երևելի պարզամիտ պատկերով։ Այս մարդը բեռնակիր սայլակապան էր, անունն Իգնատ։ Ցաւը նրան երեք ժամ առաջ բռնել էր փողոցում, բայց արդէն շատ վատ էր ներգործել վրան։ Շատ գործ ունէինք կատարելու։ Ինձանից ոչ պակաս յոգնած ու տանջուած ֆերդշերիս ուղարկեցի քնելու և ինքս մնացի հիւանդի մօտ։ Ասացի ֆելդշերին, որ ես իրան կըզարթեցնեմ գիշերուան ժամի երկուսին՝ ինձ փոխարինելու համար։

Խոնարհ գառան պէս, Իգնատն առանց հակառակելու ամեն բանին հնազանդուում էր. նա հանգիստ ու հանդարտ դեղն ընդունեց, թողեց որ իրան գրեթ (կլիզմ) դնենք և չը շարժուեց, երբ ես իր կաշի տակ քափուրի ներարկեցի։ Պիտի ասած, որ բոլոր ժամա-

նակը նա կիսանուաղ դրութեան մէջ էր։ Պառկել էր Իգնատը մէջքի վրա և խիստ անհանգիստ ու արագարագ շնչում էր։ Յանկարծ նա ցնցուեց ու շտապով գլուխը բարձից վեր քաշեց։ Ստեփանը հիւանդի գըլխավերևը նստած էր. նա իսկոյն միզաւազը (գօրշօկ) մօտ տարաւ փսխուածքի համար, բայց Իգնատը չը կարողացաւ գլուխը պինդ պահել, թուլացաւ, ընկաւ բարձին։

—Ինչի՞ չես որձկում, չե՞ս ուզում, ի՞նչ է։

Ստեփանը հառաչեց և միզաւազը ցած դրեց։

Իգնատը տեղումը ժաժ ու ժաժ եկաւ, սկսեց կըկզել ու թաթերի վրա կանգնեց։

—Այս ի՞նչ բան է, փորս չի հանդարտուում, սաստիկ ցաւում է,—գոչեց հիւանդը, նորից ընկնելով կողքի վրա։

Ես մօտեցայ նրան։

—Մի ճար արէք, սրտիս տակն այրուում է,—փընթփնթաց Իգնատը ախուոխով։ Յանկարծ նա դողահար եկաւ, առաստները սեղմեց և սկսեց կուչ ու ձիգ անել, նրա ոտքերը կծկուեցին։ Ստեփանն ու Անդրէասը տաք շշեր սկսեցին դնել։ Իգնատը երկար ու մէկ ձգուեց և ցաւի սաստկութիւնից պղտորուած աչքերը ձգեց առաստաղին։ Նրան նստացրինք վաննա։

—Ընկերները պատմում էին,—քչփչաց ականջիս Ստեփանը,—որ այսօր անօթուց վեց ամերուկ է կերել. մինչև ճաշ առողջ է եղել ու բժիշկներին ծաղրելիս է եղել։

—Ջո՛ւր,—ծանր տնքում, հառաչում էր հիւանդը՝ չը կարողանալով կախ ընկած գլուխը վեր քաշել։

Ստեփանը զգուշութեամբ բարձրացրեց գլուխն և գաւաթով ստոցաջուրը մօտ տարաւ բերանին։ Իգնատն

ամբողջ մարմնով ցնցվեց։ Նրա բերանից փսխած շատրվանի նման սկսեց թափվել վաննի մէջ։ Նորից նրան տեղափոխեցին անկողին և մի քանի հատ վերմակի մէջ փաթաթեցին։

Ժամերը միմեանց ետևից անցնում էին ծանր ու դանդաղ... Աչքերս կուչ են գալիս, փակվում են. կամքի ամենայն ուժով ես աշխատում եմ բարձր բռնել գլուխս և ուղիղ շարժել ոտքերս. սիրտս սկսեց խառնվել։ Երբեմն կարծես՝ գիտակցութիւնս անհետանում է, ամեն բան աչքիս երևում է մառախուղի մէջ։ Ես վերկացայ տեղիցս և սկսեցի մանգալ սենեակում։

—Փորս ցաւում է,—անբնական և խռպոտուն ձայնով գոչում էր Իգնատը։

Նորից հիւանդին գրեթէ գրի ու գուրս եկայ տանից։ Մեր ամբողջ թաղում ոչ մի ճրագ չէր երևում։ Խորին լռութիւն էր, շներն էին միայն հաչում և գիշերապահի կոչնակն էր լսվում։ Իսկ վերևում կապույտ աստղաճաճանչ երկինքն էր պարզ փայլում...

Մթութեան մէջ մի սև ստվեր երևաց։

—Է՛յ, պատվելի՛, ո՞րտեղ կարող եմ գտնել բժշկին,—դարձաւ ինձ ստվերը։—Չի՞ կարելի՝ շուտով օգնութիւն հասցնէք, ցաւն աղջկանս կուչ է ածել, մեռնում է։

—Տէր Աստուա՞ծ, դարձեա՞լ,—յուսահատ մտմտացի ես։

Զարթեցրին ֆելդշերին. գունահատ, քնաթաթախ աչքերը տրորելով դուրս եկաւ նա։

—Գնացէք խնդրեմ, տեսէք՝ այն տեղ ինչ է պատահել։ Եթէ լուրջ բան է, ուղարկեցէք ետևիցս։

Իգնատը նստած էր վաննի մէջ. Ստեփանը բռնել էր նրա կռնատակերից և մի տեսակ գեղջկական կոպիտ քնքշութիւնով խօսում էր հիւանդի հետ և գլխին սառույց դնում ու ջուր խմացնում։ Իգնատը չէր հանգստանում, նա անդադար շուռ ու մուռ էր գալիս և դիտմամբ ընդունում էր ամենանայարմար դրութիւն, այնպէս որ ջուրը սպառնում էր բերանն մտնել։

Մի բոպէից նա նորից խնդրեց իրան պառկացնել։ Ստեփանն ու Անդրէասը մտան նրա կռնատակերը և բարձրացրին։ Իգնատն ուզեց վաննի վրայից լոգ տալ, անցնել, ոտքը վեր քաշեց, բայց չը կարողացաւ անցկենալ. ոտքը ետ վայր ընկաւ, և հիւանդը թիկունքի վրա ետ շրջվեց և տոպրակի պէս սպասաւորների ձեռքին կախ ընկաւ։ Ես բռնեցի Իգնատի ոտքերից ու տարանք դրինք անկողին։ Շարունակ անգիտակցօրէն փորը լուծում էր. մի տեսակ կարմրագոյն շաղախ էր այն, զզուելի և թթված հոտով։

—Թուհ, ձմերուկն է,—գլուխը թափահարեց Ստեփանը։

Եւ իրաւ՝ ձմերուկն էր։ Իգնատը կերել էր կճեպն և սերմերը հետը, և որքան էր կերել... Թափվում էր հա թափվում։ Մենք նրան պառկեցրինք անկողնում։

Ես սկսեցի մանգալ սենեակում, հաղիւ զսպելով մէջս Իգնատի դէմ տածած ատելութիւնս։ Չէ՞ որ նա գիտէր որ ձմերուկ չի կարելի ուտել, բայց և այնպէս կերել է և դեռ բժիշկներին էլ ծաղրել է... Տեղն է, ինքն է մեղաւոր... Օ՜հ, որչափ ամենայն ինչ ատելի և զզուելի է շուրջս և որչափ ծանր է...

Իգնատը քանի գնում՝ վատանում էր. մոխրագոյն դէմքով, մեռելային, պղտոր աչքերով նա պառկած էր և անդադար քիչ-քիչ փսխում ու տեղումը ոլոր-մոլոր գալիս։ Ստեփանը միզաւառն էր մօտ տանում, բայց հիւանդն երեսը շրջում էր ու արիւնագոյն փսխածը շպրտում վերմակի վրա։ Մէկ-մէկ Իգնատը ոյժ տալով

թիկնում էր անկողնին և դողդողալով թաթերի վրա կկրզում։

—Իգնատ քեռի, պառկիր, ինչպէս հարկաւոր է,— ասում էր Ստեփանը՝ զգուշութեամբ բռնելով նրան։

—Փորս խիստ է կարտում,—շտապ շտապ հեւում հեթեթում էր հիւանդը և խոր հառաչում, կարճակողերի տակից կուչ ածելով փորը։

Սրան տեսէք. անկողնի վրա կարողանում է բարձրանալ, բայց վաննից հանելիս թուլանում, տապրակի պէս կախ է ընկնում և ոտքը բարձրացնել չի կարողանում։ Եւ ինչո՞ւ է վերմակի վրա թքոտում, մինչդեռ իրան միզաւառ են առաջարկում։

Գլուխս սկսեց պտոյտ գալ. յանկարծ ինձ թւաց թէ Իգնատն իր մահճակալով տեղիցը կտրուեց, առաստաղին ժռտեցաւ և սենեակի պատուհանները տեղահան եղան։ Ես թիկն ընկայ սեղանին, որ վայր չընկնեմ։ Ինչպէս եղաւ, նորից ոյժս հաւաքեցի, քափուրի սրսկեցի հիւանդի կաշու տակ և սենեակից դուրս գնացի։

Մօտակայ ճահճախուտի վրայից մառախուղը ոլորոլոր բարձրանում էր, ցուրտ էր ու խոնաւ։ Ես նստեցի նստարանին և սկսեցի ծխել։ Մի ծանր զգացմունք լեռնացել էր սրտիս վրա, անտանելի ատելութիւն էի զգում դէպի այս հիւանդը, դէպի շրջակայ վատթարութիւնները, դէպի փսխուածքները և անմաքրութիւնները։ Ամենայն ինչ ցնդարանութիւն է, և մեր այս բոլորը,յօգուտ ուրիշների կատարած գործունէութիւնը, բոլորը...բոլորը... Մի բան միայն կայ լաւ—գնալ տուն կօնեակով տաք թէյ խմել, մաքուր ու փափուկ անկողնում պառկել ու քաղցր քուն մտնել... Եւ ինչո՞ւ այդպէս չեմ անում ես, մտածում էի կատաղաբար։ Ինքս բժիշկ եմ ու գթութեան քոյրերի պաշտօն եմ կատարում։ Մի՞թէ ես եմ մեղաւորը, որ չեմ կարողանում քաղաքային վարչութիւնից ձեռք բերել ինձ համար մի օգնական բժիշկ կամ մի ուսանող, և մենակ ես եմ ու ես։ Առաւօտ երեկոյ ես կայցելեմ հիւանդանոց, էլ ի՞նչ կարելի է պահանջել ինձանից։ Բժշկի ուղեղը պէտք է թարմ մնայ, իսկ իմս... Սկսեցի հաշուել, թէ որքան ժամանակ չեմ քնել.—44 ժամ, համարեա երկու օր։ Ես նկատեցի, որ մի տեսակ ճնշուած նստած եմ և գլուխս համարեա ընկել է ուսիս վրա։

Վերկացայ և նորից մտայ հիւանդանոց։ Իգնատը՝ գլուխը թեք՝ անշարժ ընկած էր մէջքի վրա, սեւացած ու չորացած շրթունքների արանքից սպիտակին էին տալիս նրա ատամները, ներս ընկած խոռոչների միջից երևում էին պէլացած ու շարած աչքերը. մէկ մէկ սիրտ խառնելուց կծկւում էր նրա կուրծքը, բայց նա այլևս չէր թքոտում... Հետզհետէ նրա շնչառութիւնը նուազում և ընդհատւում էր։ Յանկարծ նա շարժեց ոտքերը, նրա կոկորդը միքանի անգամ դուրս ցցւեց և հասաւ ծնօտին։ Իգնատը երկար ու մէկ ձգւեց ու սառեց, մի տեսակ անըմբռնելի սուեր սփռեց նրա դէմքի վրայով... Նա մեռաւ։

Ես կանգնել էի ու շրթունքներս կռծոտելով, անշարժ նայում էի Իգնատին։ Հրամայեցի դիակը լուանալ և տանել մեռելասենեակը, իսկ ինքս գնացի տուն։

—

Մէջտեղն անցաւ մօտ կէս օր։ Ես քունս թափեցի և զարթնեցի թարմ ու կայտառ։ Ինձ կանչեցին մի նոր հիւանդի տուն։ Օ՜հ, ի՞նչ սէր ու քաղցրութիւն էի ես զգում դէպի այդ հիւանդը, ի՞նչպէս ցանկանում էի նրան ազատել։ Ոչինչ ինձ համար զզուելի չէր, քաղցրութեամբ խնամք էի տանում հիւանդին, սիրոյ զգաց-

ժունքը համակել էր ամբողջ գոյութիւնս։ Ես մտածու-
և վրդովւում էի, թէ ինչո՞ւ պիտի մարդիս հոգին կա-
խու�ունենայ մարմնից։ Ծաղրալի չէ՞ միթէ։ Մարմինը
առողջ է—և հոգիդ բոլորովին փոխւում է, դու սիրում
ես, պատրաստես ամեն ինչ զոհել...

Օգոստոսի 14-ին. Վաղուց է, որ այս տետրակում
ոչինչ չեմ գրել։ Ոչ սիրտ կայ, ոչ ժամանակ։ Մի ա-
զատ րոպէ ճանգեցիր թէ չէ, մտածում ես մի բան
վրա—պառկես քնես, որ փոքր ինչ հանգստանաս։ Ա-
լիքը բռնել է ամբողջ թաղը, օրական տասը մարդ քար-
է տալիս։ Տէր Աստուած, ինչպէս յոգնել եմ, գլուխս
ցաւում է, ստամոքսս խանգարւած է, բոլոր անդամ-
ներս համարեա փայտացած են։ Ման եմ գալիս և մե-
քենայի պէս գործում։ Օրւայ մէջ երեք ժամ հազիւ եմ
կարողանում քնել, այն էլ ինչ քուն. անհանգիստ
անառողջ։ Պառկում եմ ջարդւած, վեր եմ կենում ջարդ-
ւած։ Սկսել եմ սաստիկ հազալ, կուրծքս ցաւում է։

Օգոստոսի 18-ին. Պատմեմ մէկ-մէկ։

Աստուածածնի վերափոխման տօնին էր։ Ճաշեցի,
Աւգուստային իրաւունք տուի գնալու և ինքս պառկեցի
քնելու։ Խոր ու երկար քուն եմ մտել։ Յանկարծ հաշ-
տից սաստիկ զանգահարեցին։ Լսեցի, բայց չէի ցան-
կանում զարթնել. անկողինս տաք ու փափուկ էր։

Զանգահարութիւնն աւելի սաստկացաւ և ինձ բո-
լորովին զարթեցրեց։ Վեր կացայ, գնացի դուռը բանա-
լու։ Նախասենեակի լուսամտից երևաց, որ Բօնդարեւ
Ստեփանն էր զանգահարողը։ Նա գլխարաց էր, դէմքը
մի տեսակ այլակերպւած։

Դուռը բաց արի։ Ստեփանը ծանր-ծանր ոտքերով
ներս մտաւ նախասենեակս, քիչ մնաց շմէքի վրա
գլորւում էր.

—Դիմիտր Վասիլիչ, ձեզ մօտ եմ եկել,—խօսեց
նա մի ինչ-որ խուլ, կցկտուր հեծկլտանքով։ Նրա ե-
րեսը ջարդւած էր, աչքերը կարմրած, շապիկը պա-
տառոտւած և արիւնաշաղախ։

—Ի՞նչ է պատահել ձեզ, Ստեփան,—զոչեցի ես։

—Այ. եկել եմ ձեզ մօտ։ Տղայքն սպառնում են,
որ կտոր կտոր կանեն ինձ. դու, ասում են՝ խոլեր մա-
նածող ես... Իբր թէ ես իմ ընկերներիս դաւաճանել
եմ... բժիշկների հետ եմ կապւել, միացել...

Նա նորից խուլ հեկեկանք քաշեց և թանքով սրբեց
շրթունքների արիւնը։

—Ախար ինչ կայ. ինչ տղայք։ Ներս եկէք, Ստե-
փան. հանդարտւեցէք։

Ես ներս տարայ նրան սենեակը, նստեցրի, ջուր
տուի խմելու։ Ստեփանը մեքենաբար նստեց, մեքենա-
բար խմեց ջուրը։ Նա ոչինչ չէր նկատում իր շուրջը,
կարծես սառել, քար էր կտրւել մի ինչ-որ դառն և տա-
բակուսելի ահ ու սարսափից։

—Դեռ պատմեցէք, ինչ է պատահել ձեզ։

—Ասում են՝ ես խոլեր մանածող եմ,—դանդաղու-
թեամբ խօսեց Ստեփանը։—Հէնց նոր էի մտել պանդոկ
և մի բաժակ խմիչք պահանջել։ Բազմութիւնը մեծ էր.
բոլորն էլ հարբոտած... Այ, ասացին նրանք, ահա
եկաւ խոլեր մանածողը։ Լռել եմ. խմեցի բաժակս և մի
կտոր բան դրի բերանս... Մօտենում է Երմօլայեւ Վան-
կան, նա՝ որ ճախարակագործ է.—Հը, ասում է, պատ-
ւելի, չի՞ կարելի ձեր բժիշկներին ու ֆելդշերներին փոքր
ինչ անհանգիստ անենք։—Նրանք քեզ ինչ են արել,
ասում եմ։—Հէնց միայն նրա համար, որ նրանք չըլի-
նեն։ Ասա տեսնենք, չի՞ կարելի։—Այդ իմ գործը չէ,
ասում եմ, թող բժիշկն ինքը դատի, այդ իմ գործը չէ։

Այս բոպէին, ասում է, քո բժշկին գնում ենք ծեծելու և հիմա էլ խոսում ենք՝ սրտերս պնդացնելու համար։— Ախար ինչի՞, պատճառն ի՞նչ է, հարցնում եմ։ Այնպէս, ասում է, հիմի նոր հրաման է դուրս եկել, բժիշկներին ու ֆելդշերներին ծեծում են...

Դողոցս բռնեց, սարսուռը մտաւ մէջս. շատ էլ չէի կամենում դողդողալ, բայց իմ կամքից դուրս էր, չը գիտէի՝ շփոթւելուցս եմ սրթսրթում թէ՞ ցրտից, հագիս միայն մի շապիկ էր, ոչ սերթուկ ունէի և ոչ բաճկոնակ։

—Ի՞նչպէս ցուրտ է,—ասացի ես՝ վերարկուս ծածկելով։ Ստեփանը նայեց երեսիս, բայց երևի՝ ինքն էլ չը հասկացաւ ասածս։

—Ա՛յ քեզ, ասացին, սա էլ մեր գլխին ֆելդշեր է լոյս ընկել,—շարունակեց պատմել Ստեփանը։—Գնա, գնա, ասում էին, թէ չէ քիթ ու մռութդ կը հաւասարացնենք։—Ի՞նչ կայ, ասացի, կերթամ։ Շրջեցի թէ չէ՝ յանկարծ թափւեցին վրաս ու տուր որ կը տաս։ Ես դուրս պրծայ նրանց ձեռքից և փախայ։ Հասայ գետի ափը... կանգնեցի... Ո՞ւր գնամ... ոչ ոք չունեմ... Գնում եմ ու լալիս։ Մտածեցի՝ գնամ բժշկի մօտ։ Սիրտս տխուր է, տխուր է սիրտս. ախար ինչի՞ համար, մի՞թէ քիչ եմ աշխատել ու չարչարւել...։

Ստեփանը լռեց, նա կամաց, շնչարգել հեծկլտում էր։ Իմ սիրտս էլ լցւեց, հեկեկանքն ինձ խեղդում էր. ախար ինչի՞ համար... այո՛, ինչի՞ համար։

—Բժիշկներ լոյս ընկան մեր մէջ թէ չէ՝ ասում էին,—շարունակեց նորից Ստեփանը,—խօլերն էլ նրանց հետ եկաւ։—Դուք ձեր դատարկ գլխին զօր տուէք, ասում եմ իրանց, միքիչ աչքներդ բացէք։ Ախար ինչի՞ համար։ Մի՞թէ չէք տեսնում, թէ ինչքա՞ն մարդ է ա-

ռողջանում. շատերի մի ոտքը գերեզմանի դռանն է լինում, և մենք նրանց ազատում ենք։ Մի՞թէ մենք մի վատ բան արել ենք, մի՞թէ մեզանից մի պակասութիւն տեսնւել է։

Յանկարծ, աննկատելի կերպով, ներս մտաւ սենեակս մի բարձրահասակ երիտասարդ՝ բաճկոնով, կարմիր շապկով և նոր ու փայլուն կօշիկներով։ Նա կանգնեց շէմքի մօտ ու ծանր-ծանր մտիկ տւեց Ստեփանին։

—Ի՞նչ էք կամենում,—հարցրի ես, ակամայից դունատւելով։

Նա երկրորդ անգամ խէթ-խէթ նայեց Ստեփանին և առանց պատասխան տալու ետ շրջւեց ու դուրս գնաց։

Ես մոռացել էի այն անգամը դուռը կողպել, և նա ներս էր եկել աննկատելի կերպով. դրսի դռան փակը քաշեցի ու ետ եկայ սենեակը։ Սիրտս դանդաղ բաբախում էր, բայց այնպէս սաստիկ, որ տակտոցը դըրսից լսում էի։

—Զըլինի՞ թէ նրանցից մէկն ու մէկն էր,—հարցրի ես հևհև։

—Հէնց ինքը Վանկա Երմոլայեւն էր։ Հիմի, ուր որ է՝ բոլորն այստեղ կը լինեն,—ասաց Ստեփանը՝ սուր հայեացք ձգելով երեսիս։

Ի՞նչ անել։ Փախչի՞լ... Այն մտքից, թէ արածս ցածութիւն կը լինէր, երեսս ամօթից կարմրեց։ Լուսամուտից դուրս թռչել, դողի պէս ծակուծուկերով անցնել... Տարօրինակ բան... Ինձ թւում էր, թէ այն ժամանակ Ստեփանի սիրտն էլ կասկած և վարանում կը մտնէր... Եւ ուր պիտի փախչէի... Լուռ ու մունջ մնացի գալիս սենեակում, ոտքերս անհաստատ էին շարժւում, թիկունքովս անընդհատ բարակ սարսուռ էր անցնում։ Ներկայ անսպասելի դէպքն այժմ այլևս ինձ չէր

զարմացնում. ինձ թւաց, թէ սրտիս խորքում վաղու
սպասում էի մի այդպիսի բանի... Սաստիկ տխուր էլ
ու տրտում սիրտս, բայց միաժամանակ մի տեսակ գո
ռոզ վստահ և ուրախ զգացմունք զարթնում էր ներսս
ես դեռ չը գիտէի, թէ ի՞նչ կանեմ, բայց գիտէի, ո
կը պաշտպանեմ և կը հովանաւորեմ Ստեփանին։

Պատահարար նկատեցի ինձ հայելու մէջ։ Իմ սը
փրթնած և երկիւղից այլակերպւած երեսը նայում է
ինձ վրա խէթ-խէթ և խորթ-խորթ, կարծես ուրիշի և
բեսը լինէր և ոչ թէ իմ սեփականը։ Ես ամաչեցի Ստ
փանից և զայրացայ ներսս, որ նա տեսնում է ինձ այ
դրութեան մէջ... Է՛հ... այսուհետև ողջ մէկ է...

Դրսի դուռը սաստիկ բաղխեցին, մի և նոյն բո
պէին զանգակի ձայնը ականջս ծակեց—մէկ, երկու, ե
զանգակը կտրեց։

—Նրանք են,—թմրած ձայնով խօսեց Ստեփանը

Դուռը ջարդում էին։

Ինձ հետ պատահեց այն, ինչ որ այսպիսի դէպ
քերում միշտ պատահում էր, երբ ես որևէ վտանգաւոր
գործի էի գնում։ Ամեն ինչ յանկարծ մեռաւ մէջս, և ե
բոլորովին հանդարտեցի։ Բայց այդ հանդարտութեան
մէջ մի ինչ-որ տարօրինակ բան կար, կարծես թէ ու
րիշ մէկը վստահ և ճարպիկութեամբ գործում է մէջս
իսկ ինքս ահ ու դողով կանգնել եմ մի կողմը և հե
տևում եմ այդ ուրիշին։

—Մնացէք այստեղ,—ասացի Ստեփանին և դուրս
եկայ սենեակից, դրսից դուռը վրան կողպեցի ու բա
նալին գրպանս դրի։

Դուռը ճռռաց. լսեց խաժամուժ ամբոխի զառու
զոչումը։ Ես ետ քաշեցի փակը և դուրս գնացի։

Մի տեսակ կատաղի քրքիջ բարձրացաւ առջևս։

—Նա է, նա է,—թնդացին աղաղակները. մէկն էլ
զիլ-զիլ սուլեց... Ես արագ-արագ իջայ սանդուխքից։

—Ի՞նչ էք ուզում, եղբայրներ,—անհոգութեամբ
հարցրի ես՝ մտնելով ամբոխի մէջ։

—Տուր մեզ քո ֆելդշերին։

—Նա գնաց։ Ի՞նչ կայ, նա ձեր ինչին է պէտք,—
հարցրի ես հոգատարութեամբ։

—Մի քիչ տեղ տուէք ինձ, տղայք, ես դրան ցոյց
կը տամ, թէ մեր ինչին է պէտք ու ինչի՞ համար,—
գոչեց մի լղար, մանր ու կարմիր աչքերով ծերունի և
կռնները կշտեց, յարձակւեց վրաս։

—Սպասիր, ծերունի,—անհամբերութեամբ գոչեցի
ես և խոժոռ երեսով առաջ գնացի դէպի նա։—Հը՛, ի՞նչ
է ուզածդ, պարզ ասա՝ ով է քեզ վիրաւորել։

—Դուք ինչի՞ էք ժողովրդին կոտորում,—շտապե-
լով փնթփնթաց նա։

—Մենք. մենք ենք ժողովրդին կոտորում... Ասա,
բարեկամ, մի՞թէ դու հանգիստ խղճմտանքով ես այդ-
պիսի մեղք բարդում ինձ վրա,—բարձր ձայնով խօսեցի
ես, խփելով նրա ուսին և գիմացը կանգնած՝ ուղղակի
աչքերին նայւածքս շեշտելով։—Եղբայրներ,—արագու-
թեամբ դարձայ ես խուժանին,—ասացէք ինձ. մի՞թէ
ճշմարիտ դուք իմ մասին այդպէս էք մտածում։

Ոչոք չը պատասխանեց. բոլորեքեան մի տեսակ
հեգնական և սպասողական հետաքրքրութիւնով նայում
էին երեսիս։ Մէկէլ աչքովս ընկաւ այն տղան, որ ներս
էր եկել սենեակս։ Նա շրթունքները կռծոտելով՝ մի
տեսակ հեգնական հայեացքով մնտղում էր ինձ։

—Աստծուց չէ՞ք վախենում,—շարունակեցի ես.—
երեկ միւս ծրն եմ ես եկել, ի՞նչ է... Չէ՞ որ մի ամ-
բողջ ամիս է ձեր մէջն եմ... Դուք կարող էիք տեսնել,

կոտորում եմ ես ժողովրդին, թէ ոչ։ Փառք Աստծոյ. քանի՞ ու քանիսն են առողջացել... Հարցրէք ահա Ռիկով Իվանին, Արտիշինովին, Քեփանովին, Ֆիլիպովին. դրանք բոլորն ինձ մօտ հիւանդանոցում պառկած են եղել, հարցրէք նրանց, տեսէք՝ ի՞նչ կասեն... Եւ մի՞թէ դուք ինքներդ չը գիտէք... Գիտէք, և այնուամենայնիւ եկել էք... Այնպէս չէ՞. դուք եկել էք ինձ ծեծելու,— հարցրի ես ժպտալով։—Ահա թէ ի՞նչ կասեմ ձեզ. եկէք հետս, գնանք հիւանդանոց, հարցնենք նրանց, որոնք հիմա այնտեղ պառկած են, տեսնենք՝ ի՞նչ կասեն, արժէ՞ ինձ ծեծել, թէ ոչ... Եթէ նրանք իմ դէմ որ և է բան կասեն, կամքը ձերն է...

—Հա՛, հա՛, գնանք հիւանդանոց, գնանք։ Դու կարծում ես, թէ մենք վախո՞ւմ ենք քո հիւանդանոցից,— շտապով ձայնը բարձրացրեց մօտս եկած տղան՝ առաջ շարժուելով,—գնանք։

Խուժանը տարուբերուեց, և մենք շտապեցինք դէպի հիւանդանոց։

—Տեսնում էք, պարոններ,—խօսեցի ես ծխելով, —եկել էք այստեղ և աղմուկ էք անում... Ախար ինչի՞ համար։ Դուք ասում էք՝ ժողովուրդը կոտորում է։ Ինքներդ դատեցէք, ո՞վ է մեղաւորը։ Քանի՞ ու քանի անգամ ես ձեզ ասել եմ՝ զգուշացէք բանջարեղէնից։ Մի՞թէ կը քանդուէք, կաղքատանաք եռման ջուր պահելով։ Բայց ի՞նչ արած՝ չէք կամենում։ Իսկ եթէ ցաւը բռնի, մեղաւորը բժիշկներն են։ Շատ ժամանակ չէ, որ մէկն այստեղ մնաւ, անօթի փորով վեց ամերուկ էր կերել։ Հիմի ասացէք՝ ո՞վ է այստեղ մեղաւորը։ Նոյնպէս և օդին։ Չէ՞ որ ես ձեզ ասել եմ, օդի մի խմէք, օդին աստամոքսը թուլացնում է...

—Ո՛չ, պարոն, օդին վնաս չէ,—մէջ մտաւ մի ար-

հեստաւոր.—օդին սպանում է ցաւը, օդին օգուտ է։

—Օգո՞ւտ է։ Ապա դուք տօն օրերից յետոյ մէկ եկէք հիւանդանոց։ Տօն օրերին սովորաբար ժողովուրդը հարբում է. եկէք տեսէք, թէ երկրորդ օրը որքա՞ն հիւանդներ ենք ունենում։ Միանգամից երկու անգամ աւելի են լցւում հիւանդանոց, և էլ այդպիսիներն աւելի հեշտ են մեռնում. երեկոյին մտնում են, առաւօտը հոգին տալիս։

—Օօ, չը լրջացած, հա,—ծիծաղ բարձրացաւ ամբոխի միջից։

Հեռուում երևաց հիւանդանոցը։ Հիւանդներին անհանգիստ չանելու համար ես վճռեցի երկու—երեքին հետս ներս տանել, միւսներին դուրսը սպասել տալ։

Յանկարծ փողոցի անկիւնում երևաց մի կարճահասակ բանուոր՝ կապոյտ կիսամուշտակը հագին։ Նա, երևի, մեզ էր որոնում. նկատեց ամբոխին թէ չէ՝ շտապեց մեզ մօտ։ Շատ լաւ յիշում եմ ես այն մարդու ժպտոյն պատկերը, նեղ ճակատը և ահագին կզակը...

—Ի՞նչ է այդ, ը՞հը՛, այ թէ բռնել էք բժշկին,— հարցրեց նա շտապ-շտապ հայեացք ձգելով բոլորի վրա։ Ամբոխը ճանապարհ բացեց։ Այն մարդը մի վայրկենում աչքով ոտից գլուխ չափեց ինձ ու ձեռքը տարաւ բերեց, մի սարսափելի բռունցք հասցրեց երեսիս։ Իսկոյն աչքերս մթնեցին, ես ցնցուեցի ու գլուխս բռնեցի։ Անմիջապէս երկրորդ հարուածն իջաւ վզակոթիս։ Այնքան արագ կատարուեց այս գործողութիւնը, որ միջոց չունեցայ ուշքի գալու։

—Տուէք, տուէք,—բարձրացաւ մոլեգին աղմուկ ամէն կողմից։

Ամենքը թափուեցին վրաս։

Թիկունքիս որ զարկեցին, ես մի երկու բայլ ա-

ռաջ վազեցի, վայր ընկայ և երեսս դիպաւ մէկի ծընկանը։ Իսկ այդ ծունկն ամենայն ուժով շպրտեց ինձ շատ հեռու։ Յիշում եմ, տեղիցս վեր թռայ ու սարսափահար՝ բռնեցի մէկի թևից, որ աշխատում էր ձեռքիցս դուրս պրծնել ու գոչեցի. «եղբայրնե՛ր, սիրելի՛ք». յիշում եմ աչքիս առջև սուերների պէս տարուբերուող, կաս-կարմիր, քրտնաթաթախ դէմքերը և սեղմուած բռունցքները... Յանկարծ մի ծանր և թունդ հարուած իջաւ կրծքիս։ Շունչս կապուեց, արիւնը բերանիցս շըպրտեց, և ինքս անզգայ ընկայ գետին։

Օգոստոսի 19-ին. Երեք օր է արդէն պառկած եմ հիւանդանոցում. կրծքիցս սաստիկ արիւն էր գալիս, որը հազիւ կարողացան դադարեցնել։ Գիտեմ՝ այս ի՞նչ է նշանակում, բանս վատ է։ Երկու անգամ ինձ այցելեց նահանգապետը, տեսութեան եկան նմանապէս ինչոր բարձրաստիճան անձնաւորութիւններ։ Նրանք բոլորն էլ հետս շատ քաղցր են խօսում, ձեռքս պինդ սեղմում են։ Ես նայում եմ նրանց, բայց շատ սակաւ եմ հասկանում, թէ ի՞նչ են խօսում։ Մէկի նման ցցուել է ուղեղիս մէջ այն, ինչ որ ինձ պատահեց, սիրտս անտանելի տնքում է, և ես ինքս ինձ հարց եմ տալիս՝ մի՞թէ իրաւ, այդպիսի բան գլխովս անցաւ... Այնուամենայնիւ այդպէս է... Հաշմանդամ և կիսամեռ՝ ընկած եմ հիւանդանոցում, աչքիս առջև կենդանի կանգնոտած են կատաղի դէմքերը, լսում եմ նրանց քրքիջը, լսում եմ նրանց ճիչ ու աղաղակը՝ տուր հա տուր... Եւ նրանք տալիս էին ու տալիս։ Տալիս էին, որովհետև ես իմ բոլոր ոյժս, բոլոր գիտութիւնս նուիրեցի նրանց... ամենը... ամենը... Աստուած իմ, Աստուած, ինչ է այս—անհաւատալի, մաշող քուն թէ՞ պարզ ճշմարտութիւն... Ամօթ չեմ համարում խոստովանուել—ասլ

բոպէիս, որ գրում եմ, ես երեխայի նման լալիս եմ։ Այո՛, հիմա միայն տեսնում եմ, թէ ի՞նչպէս էի սիրում ես ժողովրդին և ի՞նչպէս դառն է վիրաւորանքը։

Օգոստոսի 20-ին. Գիշերները քունս չի տանում։ Ոտքիս փաթեթն արգելք է լինում ինձ շարժուելու, յիշողութիւնս կրկին ու կրկին ներկայացնում է աչքիս երեկ-միւս օրուան պատկերը, և ես ուզում եմ լալ։

Նրանք ծեծում էին ինձ, ինչպէս մէջները ընկած կատաղի մի շան, ծեծում էին ինձ, որի դէմ ոչինչ չը պիտի ունենային։ Հինգ շաբաթ գործեցի նրանց մէջ, ամեն քայլափոխում ապացուցանում էի իմ պատրաստակամութիւնը նրանց օգնելու և պէտք գալու, և ես չը կարողացայ մի հասարակ վստահութիւն ձեռք բերել. ես նրանց ստիպում էի հաւատ ընծայել ինձ, սակայն մի կթղայ օղի բաւական էր, որ ամեն ինչ անհետանար և զարթնէր նրանց մէջ սովորական զգացմունքը...

Օգոստոսի 23-ին. Գրել դժուարանում եմ, ձեռքս չի գործում, հիւանդութիւնս արագ առաջ է գնում, և կեանքս շատ չի տևել։ Չը գիտեմ՝ ինչի՞ այժմ, երբ ամեն ինչ վերջացած է, այսպէս ուրախ և պայծառ է հոգիս. մի տեսակ անսահման երջանկութեան արտասունք է խեղդում կոկորդս և ես ցանկանում եմ քաղցր ու ազատ լալ։

Շատ անգամ ես մոռացութեան մէջ եմ ընկնում և երբ աչքերս բանում եմ, տեսնում եմ ոտքիս տակ նըստած, գլուխը խոնարհացրած, լռիկ ճնջիկ, Ստեփանի պատկերը։ Ի՞նչպէս է նա ընկել այստեղ։ Ես շուտով իմացայ. նա եկել է հիւանդանոցի գլխաւոր բժշկի ժօտ, ոտքերն է ընկել և չի վեր կացել, մինչև որ իրաւունք է ստացել ինձանից անբաժան մնալու։

Ես չը գիտեմ, ե՞րբ է քնում Ստեփանը, ցերե՞կը թէ գիշերը. երբ զարթնում եմ՝ տեսնում եմ նրան շարունակ նստած իր աթոռի վրա, լուռ ու անշարժ... Եւ ես նայում եմ այս՝ երկու անգամ իմ ձեռքով ազատուած մարդուն ու ցանկանում եմ նրա ձեռքը սեղմել, պինդ, շատ պինդ։ Հէնց որ շարժւում եմ, նա վեր է թռչում և ուղղում է բարձս, ջուր է տալիս ինձ։ Նորից ես մոռացութեան մէջ եմ ընկնում...

Առջևս կանգնած է Նատաշաս. նրան կանչել են Պետերբուրգից հեռագրով։ Նա աչքերը ձեռքերով ծածկած՝ դառը լալիս է։ Ես կամաց շոյում եմ հեկեկանքից շարունակ դողդողացող նրա ձեռքը և չեմ կարողանում աչքս նրանից հեռացնել։ Ես ասում եմ նրան, որ չը տխրի իմ մահովս, որ ների տգէտ մարդկանց, որոնք սպանեցին ինձ նրա համար, որ ես կամենում էի իրանց օգնել։ Թող պատմէ որդուս, երբ որդիս չափահաս կը դառնայ, թէ ի՞նչպէս ես մեռայ, թող սովորեցնի զաւակիս էլ, թէ՝ ամօթ է, որ մարդս միայն իր համար ապրի, քանի որ ուրիշները տանջւում են և քանի որ նրանց հարկաւոր է մեր օգնութիւնը։

———

Միւս օրը բժիշկն այլ ևս չը կար։ Նրա բարձի տակ գտան մի՝ կապոյտ կազմով, հաստ տետրակ, որ բժշկի օրագիրն էր։ Ամեն օր նա գրում էր, ինչ որ անցնում էր իր գլխով։ Կնոջ թոյլտուութեամբ՝ մենք հրատարակեցինք այդ օրագիրը [illegible] տակը պատուելու համար։

———

ՀՀ Ազգային գրադարան
NL0325186

826

ԲԺ. Ե. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ) 5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ . . . . . 5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը . . . . . 5 »
4. Առողջապահական զրոյցներ . . . . . 5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը . . . . . 5 »
6. Ի՞նչ է անառակութիւնը . . . . . 5 »
7. Վեներական տխաեր . . . . . 5 »
8. Աշակերտի առողջապահութիւն . . . . . 2 »
9. Մեր նեարդերը . . . . . 10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած) . . . . . 10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ . . . . . 10 »
12. Գեղձախտ (զօլոտուխա) . . . . . 10 »
13. Ո՞վ է յանցաւորը . . . . . 15 »
14. Կարիք և բարեգործութիւն . . . . . 15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն 15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ . . 15 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով) . . . 20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց . 20 »
19. Կինը և տղամարդը . . . . . 15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա 5 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը . . . . . 15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն . . . . 15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . . . . . 20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) . . 20 »
25. Ստամոքսի կատարը . . . . . 20 »
26. Քուն և երազ (մի պատկերով) . . . . . 25 »
Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին 10 »
27. Գործարան թէ՞ երկրագործութիւն . . . . 15 »
28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն . . . 20 »
29. Մաերմական խորհուրդներ պատանիներին 20 »
30. Գոյութեան կռիւ . . . . . 20 »
31. Վիրխով . . . . . 25 »
32. Սէր և խանդ (մի պատկերով) . . . . . 20 »
33. Անառակութիւն և պոռնկութիւն . . . . . 20 »

ԴԻՄԵԼ՝ Գրավաճառներին։

Մամուլի տակ է ՆՈՒԷՐ ՀԱՅ ՁԻՆԻՈՐԻՆ

666

13.725

ՀԼԷԲԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. Դեմիրչեան. Դ. *Ուխտաւորներ, Աշուղի հեքիաթը (պատմուածքներ)* . . . . 7 կ.
2. Վերեսաեւ. Վ. *Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Պ. Պոշեան* . 6 կ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՍԵՐԻԱ

1. Ղազ. Աղայեանի. *Գիւնազ-տատի հեքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան* . . . . . 15 կ.
2. » » *Անտոռի մանուկը, Ասլան-Բալա, Եղեգնուհի* . . . . 15 կ.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ լոյս են տեսնելու առանձին գրքոյկներով մեր բանաստեղծների լաւագոյն ստեղծագործութիւնները։ Արդէն հրատարակուած են

1. Ծովհան. Թումանեանի *Սասունցի Դաւիթը* 15 կ.
2. » » *Անուշ* . . 15 »
3. » » *Լեգենդներ* . . 15 »
4. Շանթի . . *Երգեր* . . 15 »
5. » . . *Լեռան աղջիկը* . 15 »

ԳԻՆՆ Է 6 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество „Ст. Лисициянъ и К°“. (Бебутовская ул. 29) և Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).